



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1387

31723
L-35



1n

25 MAY 2005

14 NOV 2009

3K23
L-35

551

ԱՐ.

ՀԱՅԻ
ՕՒՆԻՑ
01+1/6

ԼԵՆԻՆԸ ՏՈՂՄԱՆԻ ՄԱՍԻՆ

(Հոգվածների ժողովածու)

• ~~ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ~~



ՏՅԱՆ

ԴԲ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԺԵՐԵՎԱՆ - 1928

10.09.2013

1387

striped

Wynne, 1928-p.

A.C. № 224
Грабові 200

ԼԵՆԻԿ - SULLUSՈՅԻ ՄԱՍԻՆ

Հե Տալստոյին Կվիթրված քննադատական ընդարձակ զրականության մեջ Լենինի սակավաթիվ, բայց շափառանց բովանդակալից հողվածները առանձնահատուկ և աշխամանակ խոշոր առ են գրավում:

Այդ հոգվածները — մարքսիստական հրապարակախոսական քննադատության փակուն մի նմուշ էն հանդիսանում:

Հոյակապսրեն տիբրապետներով դիալեկտիքական մեթոդին և հաջողությամբ կիրառելով այն գրական լեզուությունների գերուժման մեջ, ը. Լենինը խորացրեց մեռ ըմբռնողությունը Տալատովի մասին, որ խոսք ասաց նրա մասին, առեց համարձակ հետեւություններ, վորոնք գերազանցում են փոչ միայն գրականության բուրժուական և ազնվական պատմագիրների ուսումնասիրությունների արդյունքները, այլ և Տալատովի մասին գրած մարքսիստներին, վորոնց թվում եր գտնվում մարքսիստական մաքի այնպիսի ականավոր ներկայացուցիչը, վորպիսին եր Գ. Վ. Պյեխտանովը:

Վարչութիւն եւ Տալստոյի մասին արած լինինյան ընդհանրացութերի նորությունը՝ Ընթանալով նվազագույն ընդիմագրության գծով, առավելապես դրաբին պեաք եւ լիներ հանգել այն ավանդական պատկերացման Տալստոյի մասին, վորպես աղնվական ոջախների կենցակագրի և հենց այդուղ ել վերջակետ դնել: Այդպես ել ահա, վարդում ելին Տալստոյի մասին դրող ժարքսիստները մինչև Լենինը: Ինքն ըստ ինքյան ճշգրտիտ այդ յեղակացությունը, սակայն, ակնհայտորեն թերի յեր, վորովհետեւ այդպիսին վրչմի չափով չեր զբարելում և չեր մեկնում Տալստոյի ուս-



4097

39

Դրասուսպար 896 (լ.) Հր. 831 Տիկուն 2000

Պիտիրամի 2-րդ աղբարան Յերևանում—պատ. 1018

մունքին որպանապես հատուկ խոր և անհաշտելի հակառակունների սոցիալ-դասակարգային արժատները:

Զպիտի անպայման մարզսիստ լինել ընդունելու համար Տալսոյի վերաբերմանը, վորպես աղայական, ազնվական—կալվածատիրական գրականության կլասիկ ներկայացուցիչի թեզի ճշուաթյունը:

Դեռ ևս 1871 թվին եր վոր իդեալիստ, ովստիկ և մատերիալիզմի մոլեկյուն թշնամի Ֆ. Մ. Դոստոևսկին տրված գեղարվում իրավացի կերպով զրում եր Ն. Կ. Ստրախովին. «Բայց, զիտեք, այս բոլորը կալվածատիրական գրականություն եւ Նա ասել եւ արդեն այն ամենը, ինչ վոր կարող եր ասել (սքանչելի յե Լև Տալսոյի մոտ):»:

Մի այլ անելում, «Դեռահասի» ձեռագրում, նույն այդ Դոստոևսկին, ճշշտ եւ առանց անունը հիշատակելու, վերաբերութիւնում խոսուած է Տալսոյի մասին, վորպես Հագնվականության պատմագրի և «ազնվականության հոգու հոգեբանի»:

Յեվ իրոք, պատկանելով կոմսական հին տոհմի, Տալսոյը Յանայս Պոլյանա կալվածքը և 1470 գետափին հող ունեցող հինգ գյուղին տիրող կալվածատեր եր: Ճորտափրահան: Խրավոնցի ժամանակ նա տիրում եր արական սեռի 330 գյուղացիների: «Առանց իմ Յանայս Պոլյանայի յես գժվարությամբ կարող եմ պատկերացնել ինձ Ռուսաստանը և իմ վերաբերմունքը գեպի նա, — զրում եր նա 1858 թվականին, — առանց Յանայս Պոլյանայի յես, թերես, ավելի պարզ բեսնեմ իմ հայրենիքիս համար անհրաժեշտ ընդհանուր ոբենքները, բայց յես չեմ կարող այս իսանդագատանքով սիրել Կրան»:

Կարելի լի ասել, վոր աշխարհին նա նայում եր Յանայս Պոլյանայի կալվածատիրական ակարակի տերասից: Նրա բոլոր գլխավոր գործող անձերը—Բոլկոնսկիները, Ռոստովիները, Կուրակինները, Նեխիլովոնցները: Հըտենեները—«սպիտակ վոսկրի» տոհմագուն շառա-

պիղներ են, նախկին իշխող դասի—տոհմական ազնվականության—բարձրաստիճան կամ արքակալական ներկայացուցիչներ են:

«Ազնվականին նա վերցնում եւ նրա մանկությունից և պատանեկությունից,—գրում եւ Դոստոևսկին «Դեռահասի» մեջ բերվող ձեռագրում, նկարագրում եւ նրան ընտանեկան միջավարում, նրա առաջին քայլերը կրանքում, նրա առաջին խնդությունն ու արցունքները, և այս բոլորն այնքան բանաստեղծորեն, անպես անխախտելի և անվիճելի»:

Տալսոյի բոլոր գործող անձերը—«մեր ազնվական դասի նույն միսն ու վոսկորն են»—հաւաատում եւ Պլիխանովը:*)

«Տալսոյն ամբողջապես—Նահապետական ամարացում, ամբացած և գանգառ, ներհաջում եւ, վորակում սիրում են ասխախտում, գործում են համոզված և հաստատուն վոտքերով են քայլում սեփական հողի վրա»: Կրկնում եւ վոյտովովսկին.**)

Սակայն՝ կալվածատիրական առարակը մեկուսացած չեւ նրա կողքին փոփս են գյուղացիական խրճիթները: Զիափոր կամ վատքով Տալսոյը համար այցելում եր շըրշակա գյուղերը և մանրազնին կերպով ուսումնասիրում եր զլուզացիական կենցաղը, թափանցում եր գյուղացիական հողերանության մեջ:

Գյուղացության հետ ունեցած այդ սերտ շփումը չեր կարող չանդրագաննունը ստեղծագործության վրա: Տալսոյը սքանչելիորեն եր ճանաչում գյուղական Ռուսաստանը. կալվածատիրոջ և գյուղացու կենցաղի գեղարմեստական նկարագրությունը նրա լերկերի լավագույն եղերն են կազմում:

*) Գ. Վ. Պլիխանով. «Գրվածքները», հատուր X, էջ 379:

**) Լ. Վոյտովավսկի. «XIX և XX դարերի սուսական գրականության պատմությունը», մասն I, էջեր՝ 233–234:

Սակայն կալվածատերը նրա մոտ միշտ կենարոնական տեղն է գրավում:

Իզուր չե ապա, վոր սաւս կալվածատիրոջ վեպի առաջարանում նա վորոշակի հայտարարում է. - «Հիմնական զլբավոր զգացումը, վոր զեկավարելու յե ինձ այս ամբողջ վեպում - դա իմ սերն է դապի դյուզական կալվածատիրական կյանքը»:*)

Պետքանովը ճիշտ է նկատել, վոր «Տալստոյի յերկեւ ում» ժողովուրդը «հանդես և գալիս սոսկ հարեանցորեն և միմիայն տան շափով, ինչ շափով վոր նա հարկավոր ե գեղարկեստագետին: Ի՞ր հերոս - ազնվականի հոգեկան վիճակը նկարագրելու համար: Հիշեցեք, որինակ, զինվոր Պատոնն Կարատաելին, վոշն անդարը է ըերում կոստ Պատոր Բեզուխովի խովանույզ հոգունք:**)»

Սակայն, դիմեկտիքական զարգացման արոցեսում Տալստոյն ոբյեկտիվորեն դարձավ պատմական վորոշ շըրջանի ուսւս զյուղացիության դաշտակարների և տրամադրությունների արտահայտիչը՝ սակայն ճորտատիրական իրավունքի վերացումից 1861 թվականին և մինչև 1905 թվի բուրժուա - դեմոկրատական հեղափոխությունը: Յեզ քառասունինսամյա հենց այդ ժամանակաշրջանին և վերաբերում է Տալստոյի ստեղծարար ուժերի ծաղկումը, վորպես խոսքի հանճարեղ արվեստագետի:

Ինարկե, զյուղացիության շահերն արտահայտողի այդ դերին Տալստոյը կարող եր համնել միայն խզելով իր կապերը նրան շըջապատող կալվածատիրական բարձրաստիճան ներկայացուցիչների միջավայրի սովորական հայցքներից:

Այն նորը, վոր մացրեց լենինը Տալստոյի վերաբերաւ քննադատական գրականության մեջ - այն թեզի սահ-

*) Լ. Դ. Տալստոյ. - «Բնտիր Յերկերը». Մ. Ա. Ցյավովսկու խմբ. Պետհրատ, 1927. Էջ 21.

**) Գ. Վ. Պետքանով. - «Գրվածքները», հատոր X. Էջ 379:

մանումն եր, վոր Տալստոյն արտահայտում ե իր դարաշըմնի զյուղացիության գաղափարներն ու արամագրությունները և վոր նրա յերկերում «արտահայտվել ե հենց զյուղացիական մասսայական շարժման և ուժը, և թուլությունը, և հզորությունը, և սահմանափակությունը»:*)

Գյուղացիության դրությունն այն ժամանակ բնորոշվում եր ֆեոդալա - ճորտահիրական հարաբերությունների բեկվամբ և արվյունաբերական կապիտալի աճումից ծնունդ առած նոր սկզբունքների ներխուժմամբ դեպի գյուղական կյանքը:

Ամբողջ մի շարք գործերով Տալստոյը հանդես և զալիս, վրըպես կտպիտալիդմի չարիքն ու արեաները մերկացնող: Այդ քարոզքի մեջ արտահայտվել ե սկզբնական կուտակչան գորաշրջանի հանապէտական գյուղի բարյակաղ զյուղացիության բութ յերկուղը նրա առջև ծառացած և նրան անըմբունելի կտպիտալիստական զարդացման սարսափներից: «Սակայն կրակու բողոքական, կրքու մերկացնողը, մեծ քննադարը, - նկատում է լենինը, - զրահետափնի իր գործերում մեռաստանի վրա յեկող կրկնիսի և յերի միջոցների անափիսի մի անհասպացողություն ցուցաբերեց, վորպիսին հատուկ ե միայն նահապետական միամիտ գյուղացուն, այլ վոչ թե յեվրոպական կրթություն ունեցող գրողին»:**)

Պարզելով, վոր Տալստոյը ուսւս զյուղացիության գաղափարների և տրամագրությունների արտահայտիչն եր պատմական վորոշ դարաշրջանում, - լենինն այդ բանալիի միջոցով դուրսկությամբ մեկնարանեց Տալստոյի իդեոլոգիական հակասությունները:

*) Վ. Ի. Լենին. - «Տալստոյը վորպես ուսւսական հեղափոխության հայելին»:

**) Լ. Ի. Լենին. - «Լ. Ն. Տալստոյը»:

«Տալստոյի հայացքների հակասություններն այս տեսակետից՝ գրում ե Լենինը, —իսկապես հայելի յեն հակասական այն պայմանների, վորոնց մեջ եր դրված գյուղացիության պատմական գործունեյությունը մեր հեղափոխության մեջ»:*)

Գյուղացիության հակասական պայմանները այն ելին, վոր մեկ կողմից՝ նա տարերայնորեն առում եր ինքնակաւական կարգը և ձգտում եր տապալելու ցարիզմի և ուղղափառ լեկեցու լուծը, բաժանելու կալվածատիրական ամբողջ հողը, իսկ, մյուս կողմից՝ նա դեռ պարզ հաշիվ չեր տվել իրան իր քաղաքական անհիքանեցի մասին, դեռ ևս չեր գիտակցել հեղափոխական պայքարի անհրաժեշտությունը:

Գյուղացիության մեջան առավելապես զիտակից փոքրամասնութեյունն եր, վոր զենքը ձեռքին մաքառում եր իւ գասակարգությն թշնամիներից՝ կալվածատերերի գեծ, ակտավիզ մասնակցելով ազգարային շարժումների 1905 թվականի ինչպես նախորեյին, այնպես ել հեղափոխության ժամանակի:

«Գյուղացիության մեծ մասը, — ցամկելով նշում եր Լենինը, — վորպում և աղոթում եր, բարոյախոսում և յերազում եր, խնդրագրեր եր զրում ու «միջնորդներ» ուղարկում — իսկ և իսկ և իսկու նիկոլակիչ Տալստոյի գոփով»:**)

Այստեղից ել բցիում ե, ահա, Տալստոյի ուսմունքի ապշեցուցիչ լերկաւթյունը, նրա հայացքների ակազկող հակասությունները:

Վերին ե, սակայն, այդ հակասությունների ելությունը:

«Մեկ կողմից, — այսպես ե ձեակերպում Լենինը, —

*) Վ. Ի. Լենին. — «Տալստոյը, վորպես սուսական հեղափոխության հայելին»:

**) Վ. Ի. Լենին. — «Տալստոյը վորպես սուսական հեղափոխության հայելին»:

կապիտալիստական շահագործման անողոք քննադատություն, կառավարական բռնությունների, դատարանի և պետական կառավարչության կոմեդիայի մերկացում, հարստության աճման ու քաղաքակրթության նվաճումների և չքավորության աճման, վայրենացման և բանվորդասկանքների միջև լեզած հակասությունների ամբողջ խորության դրսելում, մյուս կողմից — ըստնությամբ «չարին հակառակ չգալու» յուրողիվ^{**}) քարոզ: Մեկ կողմից՝ ամենազգու ուելիզմ, բոլոր և ամեն տեսակ գիմակների զերծում, մյուս կողմից — աշխարհիս ամենանողկալի բաներից մեկի, այս ե — կրօնի քարոզը, ձգտումն արքունական պաշտոնյա տերտերների և գնասացնել բարոյական հա նոգունքի տերտերներ, այսինքն՝ ամենանըրբին և այդ իսկ պատճառով — գարգացնել առավելապես գարշելը աւելացներականություն»: **)

Այսուհետվ, պարզ է, վոր տալստոյական հայացքների դումարը վերցրած, վորպես մի ամբողջություն, անպայմանորեն ուտուպիկ, ուեակցիոն և վտանգավոր ե: Մենք կարող ենք ընդունել Տալստոյին և լնդունում ենք վոր ամբողջությամբ, այլ սրազ՝ «այստեղից և մինչև այստեղը», բանեցնելով Պետականովի գարձակածքը: Ա

Սոցիալապես վաճանգավոր ե նմանապես և Տալստոյի հայացքներն իդեալականացնելու ամեն մի փորձը:

Դեպիմայսորինակի իդեալականացումն ե զլորվել հակաձայիցս ընկ. Լուսաշաբակին՝ Տալստոյի գեղարվեստական լերկերի ամբողջական ժողովածության առաջարանում:

«Վհչ, ընդհակառակը, մենք ասում ենք Տալստոյին, — պարետիկ և կեզծ գառական վոճականչում և

*) Որոդանին՝ տկարամիտ, իծնե խենթ, վորոնց նուսաստանում ժողովուրդը համարում եր աստծուն նվիրված, կամ աստծու մարդիկ, ծան, թարգ.

**) Վ. Ի. Լենին. — «Լ. Տալստոյը, վորպես սուսական հեղափոխության հայելին»:

Լունաշարսկին, — դու մեր գյուղացիության մարդարեն
նրա իդեռոլոգը՝ իր բոլոր դրական խոշոր և բոլոր
բացասական կողմերով հանդերձ»: *) (ընդգծումներն իմե
են.—Ձ. Ռ.):

Իսկ դրանից քիչ վերև ընկ. Լունաշարսկին ասում եր
թե՝ «Տալստոյ—աղան «սկսեց ապրել հեղափոխու-
թյամբ» և անվանում է նրան «հեղափոխական գյու-
ղացիության մեկ մասի» իդեռոլոգը: **)

Այստեղից ել պարզ է, վոր ընկ. Լունաշարսկին բնակ
չի ըմբռնել: Լենինի տեսակետը ե, ըստ յերեսութին, նրան
զերստին պաշարած աստվածաբանական և աստվածախու-
գական տրամադրությունների ըեցիդիվի ազգեցության
ներքո, հանդիսավորությամբ «ոժուժ ե» լ. Տալստոյին,
զորպես մեր խորհրդավոր գյուղացիության «մարզարելի»:

Հենինի գիրքից առավել հրեշտավոր մի նշանչ դժվար
է պատկերացնել:

« Տալստոյը —… գաղափարների և տրամադրու-
թյունների արտահայտիչն ե... — ասում է Լենինը:

— Վոչ, իդեռուցն ե և մարզարեն, — ուզգում է նրան,
Լունաշարսկին:

— Թուր զյուղացիության: ... — շարունակում է Լենինը:
— Վոչ, հեղափոխական գյուղացիության մեկ մասի, —
նորից ուզգում ե մացնում ընկ. Լունաշարսկին:

— 1861 թվից սկսած մինչև 1905 թիվը տևող պատ-
մական սահմանափակ մի ժամանակաշրջանի, — վերջացնում
է Լենինն իր թեզը:

— Վոչ, գյուղացիության ընդհանրապես, այդ թվում
և ԽՍՀՄ աշխարհուն գյուղացիության, — շարունակում է ընկ.
Լունաշարսկին:

Ընկ. Լունաշարսկու դիրքի սխալականությունն այն-

*) Ա. Լունաշարսկի. — «Արաջարանը», եջ 20:

**) Նույն տեղում — եջ 8 և 9:

քան պարզ և ակնբախ ե, վոր հազիվ թե կարիք կա: ման-
րամասնորեն բացատրելու:

Ինչու համար ե Լենինը Տալստոյին գյուղացիության
գաղափարների և տրամադրությունների արտահայտիչն
անվանում և վոչ թե՝ իդեռոլոգ կամ գյուղացիական մար-
գարեն:

«Մարզարե» բառն ընդհանրապես չի լեզել Լենինի
բառաշրանում, Լենինի, վորն իր ամբողջ կյանքի ընթացք-
ում պալքարել ե եմպերիոկրիտիկների, եմպերիոմունիստ-
ների և փիլիսոփայական բոլոր այլ թեքում ունեցողների
դեմ:

Կարելի՞ յե արզուք ասել, թե Տալստոյը գյուղացիու-
թյան իդեռոլոգն ե յնպես: Ինարկե, վոչ:

Ույեկտիվորեն Տալստոյն արտահայտել ե գյուղացիա-
լուք, վորոշ տրամադրությունները, բայց գյուղական իդեռ-
ոլոգ նա յերեք չի լեզել:

Լենինն ամեն կերպ բնդիմում է, վոր Տալստոյն ար-
տահայտել ե կրավորական, վոչ հեղափոխական գյուղա-
ցիության մեծամասնության շահերը, վոր գերազանել ե
«բռնությամբ չգալ հակառակ շարի» և իր չմասնակցելովը
հեղափոխական ըլքաբարին: Նույնառել ե 1905 թվականի
հեղափոխության պարագությանը:

Տալստոյին «հեղափոխականի» զբիմ անելուց և նրան
իդեռականացնելուց զատ՝ ուրիշ ինչ իմաստ կարող ե
ունենալ նրա հեղափոխական գյուղացիության իդեռոլոգի
դերում գուրս բերելը:

Վերջապես, Լենինը պարզ ասում է, թե՝ Տալստոյն
արտահայտում եր զյուղացիության գաղափարներն ու
տրամադրությունները նրա զարգացման պատճական վե-
րոշ փուլի մեջ, այլ վոչ թե ժամանակի և տարածության
սահմաններից դուրս:

Զիա վերացական ճշմարտություն: Ճշմարտությունը
միշտ կոնկրետ ե: Դիալեկտիկայի այս իմաստուն կանոնն

արհամարհելն է, ահա, վոր հասցրել ել ընկ. Լուսաշարուկաւն այն անմիտ հետեւության, թե Տալստոյին ընդհանրապես մեր գլուղացիության իդեոլոգը պետք ե հռչակել:

Իրականում, սակայն, Խորհրդույին միության բատրակներն ու չքափոր գյուղացիները, ինչպես և բանվոր գառակարգը, Համամիութենական Կոմունիստական Կուսակցությունից զատ՝ ուրիշ վորեն իդեոլոգ չունեն:

Առավել մեծ շփոթ առաջացրեց Լ. Ակսելրոդ՝ Արթուրովը՝ Տալստոյի զեղարքեսատական լերկերի մեկ ուրիշ ամբողջական հավաքածուի ներածական իր հողմածով։ Սա արդեն ուղղակի և առանց այլայլության Տալստոյին հեղափոխական և անվանում։ Այս նրա իսկական խոսքը. —

«Իր աեւմլերամենառվ, իր ձգտումով դեպի ինքնուրույն մատածողությունը, զարծուսության էր բացաշունչ մայեքնությամբ, իր արմատական հայացքով սոցիուական իրականության վերաբերմաբ նա—հեղափոխական ե»։

Հեշտ ու թեթև ե բաշխում հեղափոխականի կոչումն իր ամբողջ կյանքում մենչեիկ նստած լուսրով Ակսելրոդը։

Բանից գուրս ե գալիս, վոր բնավ կարենը եւ չե, թե իսուս վար քառակարգի յե ուղղված այս կամ այն տեսակերամենտը, սոցիալ-քաղաքական ինչպիսի բովանդակություն ունի ավալ մտածողությունը, —բավական ե հենց պարզապես սոսկ մի «ձգտում ունենալ դեպի ինքնուրույն մտածողությունը» և հախուռն տեսպելամենտ, —վորպեսզի Ակսելրոդի աշքում մարդ հեղափոխական դառնաւ ձիշտ ե, այս նսխապայմաններին նա լերկու ուրիշ նշանացուց ել ե ավելացնում. —զօրծողության բոցաշունչ մոլեգնությունը» և «արմատական հայացքը սոցիալական իրականության վերաբերմաբ», սակայն՝ նա աչքաթող ե անում մերգալի հակառակ կողմը, վոր զօրծողության այդ բոցաշունչ մոլեգնությունը Տալստոյի մոտ կաշկանդվում եր «բարոյական ինքնակատարելագործման» քարոզով, վորովի-

ովն դատապարտում եր մարդուն հասաբակալան կրավորականության, իսկ արժամատական հայացքը սոցիալական իրականության վերաբերմաբ շատ հաշտ ու խաղաղ կենակցում եր «բանությամբ շարին չհակառակելու» հետ։

Միթե կարելի յե հեղափոխական անվանել Տալստոյին, վորը հեղափոխական մեթոդների համոզված հակառակություն եր։

Գուրս ե գալիս, վոր մարքսիզմից շատ հեռու յե գնացել արդեն լուսով իսահակովսա Ակսելրոդի հակագիալեկտիբական «մեխանիկան»։

Հարունակելով այսուհետեւ իր մտքի զարգացումը, նա հետաւրիկ ինքնամոռացության տագնապում հեղափոխության պոտենցիալ առաջնորդի և ճնշված մասսաների առաջնորդի թաղն ե գնում Տալստոյի պլանին, «Եր բընությունը Տալստոյը ակտ ե վոր ճնշեցնությունը վարդական առաջնորդը դառնարք» Ակսելրոդի կարծիքով, Տալստոյն անխուսափելիորեն ճնշված մասսաների գործնական առաջնորդը պիտի գառնարք, յեթե յիան ազգական տրաղիցիան ամուր բռնած չինեց նրա վկից. Ակսելրոդի այս վիլխուսական «իմաստուն» ափորիզմներն ակամայից հիշեցնում են ինձ ուսուական հապանի ուրպի խոսքերը. —

«Յեթե չգար ծաղկանց վրա ցուրտը ձմրան.»

Չմեռ ցրտին ել կր բացվեր վարդ ու շուշան»։

Հակիրճ առաջարանում անհնարին ե նշել Լ. Ակսելրոդի՝ իր հոգվածում սպրդած բոլոր սխալները. Բավական ե հիշատակել, վոր նա առանց վորեն հիմք ե արգումենտացիալի փորձ ունենալու անվանում ե Տալստոյին «Նարոզնիկ», «ոբյեկտիվիստ» և այն, և այն։

Տալստոյի վերաբերմաբ սխալ և աչքամ արդեն հակառակ ծալրահեղության հասցրած մի հայացք ե զարգացնում ընկ. Ոլմինսկին. Իտարբերություն ընկ. Լուսաշարսկուց և Ակսելրոդից (Որթողոքս), սա ել ծառւմ ե

վայտը վոչ թե Տալստոյի իդեալականացման, այլ՝ նրան
միակողմանիորեն սևացնելու, նրա մերկացնող քննադա-
տության դրական գերը թերագնահատելու կողմբ:

Տարբերվելով Լենինից, ընկ. Ոլժինսկին արհամարհում է Տալատովի հայացքներում յեղած հակասությունները, տեսնում է միայն պակասությունները, մոռանալով արժանիքների մասին:

«Յես ինքս կարդացել եմ «Պատերազմ և Խաղաղությունը, - գրում ե ընկ. Ոլմինսկին, - դեռ ևս գեթ փոքր ի շատե զիտակից հեղափոխական չեղած ժամանակը՝ 14—15 տարեկան հասակում, իսկ այսուհետեւ վորոշեցի ելի վորեւե բան կարդալ (գարդյու՛) «Պատերազմ և Խաղաղությունը», «Աննա Կարենինան») բանառում, 90-ական թվականների յերկրորդ կիսում: Յնդ այն ապափռությունն ստացվեց, թե իզուր ժամանակ կողըրի հականեղափոխական այս յերկերը կարդալու վրա»:*)

Իհարկե, խնդիրն այսպես գնելու ձեր արժատապես սխալ է։ Գրչի մեկ շարժումով «Պատերազմ» և Խաղաղությունը» և «Աննա Կարենինան» վասել հականեղափոխական գրականության շարքը, այդ նշանակում ե ջնջել բոլոր սահմանները Տարստոլի վեպերի և ոռու դրականության այնպիսի՝ իրապես հականեղափոխական վեպերի միջև, ինչպես, որինակ. Դոստովեցով՝ «Զարքերը», Վաելովոդ Կրեստովսկով՝ «Պանուրզյան հոտը». Կլյուչնիկովի՝ «Պատրանքը», Լեսկովի վորոշ վեպերը. Բնկ. Ալմինսկին իր անփաստարկելի և չհիմնավորված հայտարարությամբ փաստորեն հավասարության նշան ե դնում նրանց միջև։

«Հասկանալի յե, ուրեմն, ձեզ վերաբերմունքը գեպի Տալստոյը, - զրուժ է նա, — Նրան, ինչպես և Դոստովսկուն

*.) Մ. Ալմինսկի.—«Մեր վերաբերմունքը դեպի Տալմառը»:
«Ազգային», 1928. № 4. Արտատպած և «Հա Լитературном
посту» ժուռնալի 1928 թ. №3-ում):

(«Զարքեր» պասկվիլային վեպից հետո) պարզապես չելին
կարդում»;*)

Թողնենք ընկ. Ումինսկու խղճին նրա այս հայտաբարությունը, թէ՝ Տալստոյին «պարզապես չելին կարդում»։ Սակայն, համենայն դեպս, այլ բան եւ «Զարքերը» և այլ բան եւ—«Պատերազմ և Խաղաղությունը» «Զարքերն», այդ գաղշելի մի պասկվիլ և հեղափոխության մասին, հեղափոխականների կատարչալպսակաղերծ անելու մի փորձ, մինչդեռ Տալստոյի գեղարվեստական լերկերում՝ կարատաեցինալի ռեակցիոն քարոզի, ավետարանական «ինձնից վրեժ և՝ լես կը հատուցանեմ» մոռիվի շուրջը տպած կեղծաբարու քարոզի, Նեխյուղովի հոգու տալստոյական վագով նկաղաղրված «հարության» պատկերացման գուղընթաց,— պարփակված են մերկացուցիչ փակուն եջեր, վոր գալիս են քողազերծ անելու ցարական կառավարության բռնությունը, դատարանի կոմեգի ան, դառակարգավին հասրակության այլող հակառակությունները, գրուղացիների անողոք հարստահարությունը։ Ընկ. Ումինսկին կշտամբում է Տալստոյին, վոր նա տպագրվելու և յեղել «Ռուսկի վեստնիկ» ժուռնալում, բայց մեկ բառով անգամ չի հիշուակում նրա աշխատակցության մասին «Սովորեմենակում» և «Ռուսեստավենսիյե Զապիսկի» ժուրնալում։ Վերջապես, ընկ. Ումինսկին լուսթյան և տալիս և այն փաստը, վոր «Ռուսկի վեստնիկը» տպագրել եր «Աննա Շարենինայի» ձիալն լոթ մասը, իսկ ութերորդը առանձին հրատարակությամբ պետք երւս տեսներ, վօրովհետեւ «Ռուսկի վեստնիկի» խմբագրությունը հրաժարվել եր տպագրել այդ գիսին՝ իր և հեղինակի միջև արևելյան խնդրի և 1877—78 թվականների ուռւստաճկական պատերազմի գնահատության շուրջը ծաղած տարածայնությունների պատճառով։

*.) *U.* *Թէմինուկի.* — Կույն տեղում:

Այս իսկ պատճառով նույնացնել կատկովան առուսկի վեստնիկի» սկզբուը ակաչին խավարապաշտությունը Տալստովի հայացքներին, կամ թե՝ հավասարության նշան դնել նրանց միջև, — նշանակում ե ամենտկոպիտ սխալը գործեր:

Տալստովի թողած գեղարվեստական ժառանգությանը ժարքսիստական քննադատար պետք ե մերձենա բենիշան ուղեցուց գծի ուժանդակությամբ, խորամտորեն վերլուծելով, թե՝ ինչ ե անտեղ ընդունելի և ինչն ե մեջքելի: Զի կարելի զիսովին ժխտել Տալստովի յերկերը, վորպես առանց բացառության ռեակցիոն մի ամբողջություն: Զի կարելի զիտել Տալստովի յերկերի ժողովածուն, վորպես հակառակափոխական դադարքարների: Ժողովածու,

Զ Թասկոլեիկով

ԵՎ ՏԱԼՍՏՈՅԸ, ՎՈՐՊԵՍ ՌՈՒՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՅԵԼԻՆ

Մեր գեղարվեստագետի անվան համագրությունը հեղափոխության հետ, վորը նա բացահայտորեն չըմբռնեց, վորից նա բացահայտորեն հեռացավ, առաջին հայացքից տարրինակ և արհեստական կարող ե թվալ: Հո չի կարելի հայելի կոչել այն, վորը յերեսութները ակնհայտ կերպով ճիշտ չի արտացոլում: Սակայն՝ մեր հեղափոխությունը — չափազան բարդ յերկութեւ: Նրա անմիջական կատարողների և մասնակիցների բամբության մեջ սոցիալական շատ տարրեր կան, վորոնք նույնալես բացահայտորեն չելին ընթառում կատարվող գեպքերը և նույնպես հեռու ելին կանգնում անցքերի բերումով մեր առջև դրված պատմական արդիական խնդիրներից: Յեվ յեթե մեր առջև հիրավի մեծ գեղարվեստագետ և կանգնած, տպա՝ հեղափոխության գեթ մի բանի ելական կողմերը նա պետք ե վոր արտացոլեր իր յերկերում:

Մուսական լեզար մամուլը, վոր լեցուն և Տալստովի 80.ամյակի հոբելանի առթիվ գրված հոդվածներով, նաև մակներով և ակնարկներով, տմնից ըիշ հետաքրքրվում ե նրա յերկերի վերլուծմամբ՝ ուռասական հեղափոխության ընութիւն և նրա շարժիչ ուժերի տեսակետից: Ամբողջ այդ մամուլը զգիւլու չափ լեցված ե յերեսպաշտությամբ: — յերեսպաշտությամբ յերկու տեսակի՝ պաշտոնական և լիբերալ: Առաջինը — բիբու յերեսպաշտությունն ե ծախուզչակների, վորոնց գեռ յերեկ հրամայված եր հալածել է. Տալստովին, իսկ այսոր՝ հայրենասիրություն գանել նրա մեջ և ջանալ բաղաքավար ձեեր բանեցնելու Յեվոպայրի առջև: Վոր արդուիլամի պաշակներին իրանց գրած-

ների համար վճարված ե,—այդ հայտնի յե առենքին և նրանք անկարող են խարել վորևե մեկին։ Շատ ավելի նրբին ե այդ իսկ պատճառով՝ շատ ավելի վնասակար ու վտանգավոր ե լիբէրալ յերեսապաշտությունը։ Յեթե լսենք «Ռեչի»¹) կադետական սոխակներին, —նրանց համակրանքը գեղի Տալստոյը — ամենակատարյալ ե և ամենաջերմ։ Իրականում, սակայն՝ չափ ու ձեած դեկլամացիան և «մեծ աստվածախույզի» մասին պսած փքուն ֆուադները — համափարփակ մի կեղծիք ե, վորովհետեւ ոռւսական լիբերալը գնչ հավատում ե տալստոյական աստծուն և վոչ ել տիրող կարգերի տալստոյական քննադատությանն ե համակրում։ Նա քսվում ե ժողովրդական անվան, վորպեսզի ալդապիսվ բազմացնի քաղաքական իր կապիտալը, վորպեսզի համազգային ոոլողիցիալի առաջնորդի գերը կատարի։ Նա ճգնում ե ֆուազների դղիրդ ու շառաչով խլացնել շեշտակի և պարզորեն պատասխան տալու պահանջը այն հարցին, թե՝ ինչով են պայմանավորված «տալստոյականության» աղաղակող հակասությունները մեր հեղափոխության վորպիսի թերություններն ու թուրթյուններն են արտացոլում նրանք։

Տալստոյի յերկերի, հայացքների, ուսմունքների և դպրոցի հակասություններն — իրոք վոր աղաղակող են։ Մեկ կողմից՝ հանճարեղ մի գեղարվեստագետ, վոր տվել ե վոչ միայն ոռւսական կանքի անդուգական պատկերներ, այլ և համաշխարհային զրականության առաջնակարդ յերկեր, իսկ մյուս կողմից՝ ի Քրիստոս խենթացյալ մի խալվածատեր։ Մեկ կողմից — զարմանայի՛որեն ուժեղ, անմիջական ու անկեղծ մի բողոք ընդդեմ հասարակական ստի և կեղծավորության, իսկ մյուս կողմից — մի «տալստոյական», այսինքն՝ ոռւսական ինտելիգենցիալ, ծեծկված հիստերիկ մի վողորմելիություն, վոր հրապարակավ իր կուրծքը ծեծելով՝ ասում ե. «Յես պիղծ եմ, յես վատ ու զաղելի յեմ, բայց յես զբաղված եմ բարոյական ինքնա-

կատարելագործմամբ, յես ազկս միս չեմ ուտում և մնվում եմ միմիայն բրինձե կատլետներով»։ Մի կողմից՝ կապիտալիստական շահագործման անողոք ըննաղատություն, կառավարական բոնությունների պետական կառավարչության կոմեդիայի մերկացում, հարստության աճման ու քաղաքակրթության նվաճումների և չքափորության աճման, վայրենացման և բանվոր դասակարգի առաւապանքների միջն յեղած հակասությունների ամբողջ խորության զրսեփորում, մյուս կողմից՝ բոնությամբ «Հարին հակառակ չզալու» լուրողիվ քարոզ։ Մեկ կողմից — ամենազգուն ուեալիզմ, բոլոր և ամեն տեսակ դիմակների զերծում, մյուս կողմից — աշխարհիս ամենանողկալի բաներից մեկի, այն ե — կըոնի բարոզը, ձգտումն՝ աշքունական պաշտոնյա տերտերների տեղ նստացնել բարոյական համոզմունքի տերտերներ, այսինքն՝ ամենանըրբին և այդ իսկ պատճառով — զարգացնել առավելապես գարշելի տերտերականություն։

Հիբավիր. կարելի յե տաել—
«Թու և խղճուկ, գնչ և առատ,
Դու՝ և հզոր, և անճարակ—

Մայր միուսիա»։

Վոր այսպիսի հակասությունների պայմաններում Տալստոյը բացարձակապես չեր կարող ըմբռնել գնչ բանվորական շարժումը և նրա գերը հանուն հեղափոխության մղվող պայքարում, վոչ ել ոռւսական հեղափոխությունը, — այդ ինքնին ակնհայտ ե։ (Սակայն, Տալստոյի հայացքների և ուսմունքների մեջը յեղած հակասությունները պատահականություն չեն, այլ արտահայտությունն են XIX դարի վերջին յերեսնամյակի ոռւսական կյանքի պայմանների։ Դեռ յերեկ միայն ճորտատիրական իրավունքից ազատազրված նահապետական գյուղը ըառփս բուն իմաստով մատնված եր կապիտալի ու պետական գանձարկղի հեղեղման և կողովուտին։ Գյուղացիական

տնտեսության և գլուղացիական կյանքի հին հիմունքները՝ վոր իբապես դարերի ընթացքում պահպանել ելին իրանց դոյլությունը, խորտակվեցին արտասովոր արտգությամբ։ Յեվ Տալստոյի հալացքներում յեղած Տակառությունները պետք ե գնահատել վոչ թե արդի բանվորական շարժման և ժամանակակից սոցիալիզմի տեսակետից (այդորինակ գնահատությունը, հարկավ՝ անհրաժեշտ ե, բայց այդ դեռ բավական չէ), այլ՝ առաջխաղացող կապիտալիզմի, մասսաների սնանկացման և հողագրկման դեմ ռւդղված այն բողոքի տեսակետից, վոր պիտի ծնունդ առներ ռուսական նահապետական զցուղից։ Տալստոյը ծիծաղելի յէ, վորպես մարդկության փրկության նորոգ դեղատումներ հայտնագործող՝ մի մարզարե, — և այս իսկ պատճառով բոլորովին վողոբմելի յեն արտասահմանյան և ռուսական «տալստոյականները», վորոնք կամեցել են զոկմայի վերածել նրա ռւսամունքի հենց ամենաթուլ կողմը։ Տալստոյը մեծ ե, վորպես արտահայտիչն այն զաղափարների և տրամադրությունների, վոր կազմավորվեցին ռուսական բազմամիլիոն գլուղացիության մեջ՝ Ռուսաստանում բուրժուական հեղափոխության սկսվելու պահին։ Տալստոյն որիգինալ ե, վորովհետեւ իր ամբողջությամբ թնառակար նրա հայացքների հավաքականը՝ հենց արտահայտում ե մեր հեղափոխության առանձնահատկությունները վորպես գլուղացիական բուրժուական մի հեղափոխության։ Յեվ այս տեսակետից, Տալստոյի հայացքների մեջ յեղած հակառությունները — իսկական հալելին են հանդիսանում այն հակասական պայմանների, վորոնց մեջ ե գտնվել զցուղացիության պատճական գործունելությունը մեր հեղափոխության ընթացքում։ Մի կողմից՝ ճորտատիրական ճնշման դարերը և հետուեփորման արագաթափականաման տակապարական իմաստության վեցական խելահեղության լեռներ կուտակեցին։ Զգտումը՝ հիմնվեր քանդելու և արբունական

զեկեղեցին, և կալվածատերերին, և կալվածատիրական կառավարությունը, վոչնչացնելու հողատիրության բոլոր հին ձևերն ու կարգերը, մաքրելու հողը, կառուցելու վոստիկանական - դասակարգային պետառթյան փոխարեն՝ աղատ և իրավահավասար մանր գյուղացիների հանքակեցություն, — այս ձգտութիւն, ահա, կարմիր թելի պես և անցնում գյուղացիների բոլոր պատմական քաղլերի միջով մեր հեղափոխության մեջ և, անտարակույս և, վոր Տալստովի դրվածքների զաղափարական բովանդակությունը շատ ավելի գյուղացիական հենց այս ձգտմանն և համապատասխանում, քան թե վերացական «քրիստոնեական անարխիզմին», ինչպես յերբեմն վորակում են նրա հայացքների «սիստեմր»:

Մուս կողմից — զլուղացիությունը, ձգտելով դեպի հանրակեցության նոր ձևեր, շատ անզիտակցորեն, նահապետական ձևով և լուրզողիկորեն եր վերաբերվում այն խնդրին, թե ինչպիսին ել լինելու այդ հանրակեցությունը, ինչպիսի պայքարով պետք են նվաճել այդ ազատությունը, ինչպիսի դեկավարներ կարող են նա ունենալ այդ պայքարում, ինչպես են վերաբերվում զլուղացիական հեղափոխության շահերին և բուրժուազիան և բուրժուական ինտելիգենցիան ինչի համար են անհրաժեշտ ցարական իշխանության բռնական տապալումը՝ կալվածատիրական հողատիրությանը վերջ տալու նպատակով։ Գլուղացիության ամրող անցյալ կյանքը սովորեցրել եր նրան ատելու բարինին (ազային) և չինովսիկին (աստիճանավորին), սակայն՝ չեր սովորեցրել և չեր եր կարող սովորեցնել թե վորաեղ պետք են այս բոլոր հարցերի պատասխանը վնատորի։ Մեր հեղափոխության մեջ գլուղացիության փոքրագույն մասն իրապես մաքառում եր՝ զեթ փոքր ինչ կազմակերպվելով այդ նպատակի համար, և արդեն իսպառ աննշան եր վոր զենքը ձեռքին վոաքի յեր յելնում իր թշնամիներին բնաջնջելու, ցարական ծառաներին և կալ-

վածատերերի պաշտպաններին վոչնչացնելու համար: Գյուղացիության մեծագույն մասը վողբում և աղոթում եր, բարոյախոսում և յերազում եր, խնդիրներ գրում ու «միջնորդներ» ուղարկում, իսկ և իսկ էն նիկալահիչ Տալատոյի վոգով: Յեվինչպես միշտ լինում են նման դեպքերում՝ տալստոյական ձեռնպահությունը քաղաքականությունից, տալստոյական հրաժարիմքը քաղաքականությունից, դեպի ալտպիսին հետաքրքրություն չունենալը և այդպիսին չըմբռնելը ան հետեանքն եյին ունենում, վոր գիտակից և հեղափոխական պրոլետարիատին հետեւում եթ միայն փոքրամասնությունը, մինչդեռ մեծամասնությունը բաժին դարձավ այն բոլոր անսկզբունք, ստրկամիտ, բուրժուական ինտելիգենտներին, վորոնք կագետներ անունով վազ եյին տալիս արուգովիկների²⁾ (աշխատավորականներ) ժողովները, Ստոլիպինի³⁾ նախասենյակը, աներեսաբար մուրում, սակարկում, հաշտեցնում, խոստանում հաշտեցնել, — մինչև վոր նրանց բոլորին դուրս բցեցին զինվորական կոշիկի հարգածով: Տալստոյական դաղափարները հայելի յեն—մեր զուղացիական ապստամբության թուլության, պակասությունների, արտացոլումն են նահապետական գլուղի անողնաշարության և «անտեսարար գլուղացու» քարացած յերկշոտության:

Վերցրեք զինվորների ապստամբությունները 1905-1906 թվականների: Մեր հեղափոխության այդ մարտիկների սոցիալական կազմը—գյուղացիության և պրոլետարիատի միջանկան է: Պրոլետարիատը փոքրամասնություն ե կազմում, այս իսկ պատճառով զորքերի մեջ յեղած շարժումը մոտավոր չափով անգամ համառուսական այնպիսի միաձուլություն, կուսակցական այնպիսի գիտակցականություն չի ցուցանանում, ինչպիսին ցուցահանեց՝ կարծես կախարդական մեկ ձեռքի շարժումով սոցիալ-դեմոկրատական դարձած պրոլետարիատը: Մյուս կողմից՝ չկագոչինչ առավել սխալական, բան այն կարծիքը, թե զին-

վորների ապստամբությունների անհաջողության պատճառը դեկագարող սպաների բացակալությունն եր: Ընդհակառակը՝ հեղափոխության հսկայական հառաջադիմությունը «Նարոգնայա Վոլցայի»⁴⁾ժամանակներից արտահայտվեց հենց նրանով, վոր իր իշխանության դեմ զենքի դիմեցին այն «գորշ անասունները», վորոնց ինքնուրուցնությունն այնպես վախեցրել եր լիբերալ կալվածատերերին և լիբերալ սպալությանը: Զինվորը լեցված եր համակրանքով դեպի գլուղացիական գործը. նրա աշքերը բոցավառվում ելին հողի սոսկ անունը միան լսելիս: Իշխանությունը մեկան գամ չե, վոր զորքի մեջ անցնում եր զինվորների մասսայի ձեռքը, սակայն՝ այդ իշխանությունը վճռականորեն համարյա չեր ողագործվում, զինվորները տատանվում ելին—վորևե ատելի՝ զորապետի սպանելուց միքանի ժամ հետո, նրանք ազատում ելին կալանքից մլուսներին, բանակցություններ եյին սկսում իշխանության հետ, և այնուհետև՝ զնում եյին գնդականարգվելու, պառկում եյին մարակների տակ, նորից իրենց վզի վրա ելին վերցնում լուծը,—իսկ և իսկ էն նիկալակիչ Տալստոյի վոգով:

Տալստոյի արտացոյել և գառնազին ատելությունը, հասունացած ձգտումը դեպի լավագույնը, հնից ազատազրվելու ցանկությունը և լեռազականության, անհասուն լինելը, բաղաքական անդաստիարակությունը, հեղափոխական անողնաշարականությունը: Պատմա-տնտեսական պայմանները բացատրում են և մասսաների հեղափոխական պայքարի ծագման անհրաժեշտությունը, և նրանց անպատճառությունը պայքարի համար, տալստոյական «չարին չհակառակելը», վոր հեղափոխական առաջին կամալանիալի պարտության ամենալուրջ պատճառն եր հանդիսանում:

Առում են, թե պարտված բանակները լավ են սովորում: Բնարկե, հեղափոխական դասակարգերի համեմատությունը բանակների հետ, միշտ ե, սոսկ շատ սահմանափակ իմաստով: Կապիտալիզմի զարգացումը ժամ առ ժամ

կերպարանափոխում և սրում ե այն պայմանները, վոր
հեղափոխական-դժմոկրատական պայքարի ելին մղում միլ-
լիոնավոր գյուղացիներին, այն գյուղացիներին, վորոնք ի
մի ելին համախմբված իրենց ատելությամբ դեպի կալ-
վածառեր-ճորտատերերն ու նրանց կառավարությունը:

Հենց իր իսկ գյուղացիության մեջ փոխանակության,
շուկայի տիրապետության և փողի իշխանության աճումը
ավելի և ավելի լի դուրս գանում նահապետական հինը
և նահապետական փիլիսոփայական իդեոլոգիան: Բայց
հեղափոխության առաջին տարիների և առաջին պարտու-
թյունների մի նվաճումը մասսայական հեղափոխական
պայքարի մեջ ակներև և, - այդ այն մահացու հարգածն
ե, վոր հասցըրվեց մասսաների նախկին լղկածության և
թուլամորթության: Սահմանադեմքն առավել պարզուշեն
դարձել: Դասակարգերն ու կուսակցությունները զրահատ-
վել են: Ստորիպինչան դասերի մուրճի տակ, հեղափո-
խական սոցիալ դեմոկրատների անշնչ տոկուն կատարվող
աղիտացիայի պայմաններում, վոչ միայն սոցիալիստա-
կան պրոլետարիատը, այլ և գյուղացիության դեմոկրատա-
կան մասսաները անխուսափելիորեն առաջ պիտի քաշեն
առավել կոփված մարտիկներ, վորոնք քանի զնան՝ աչնքան
ավելի քիչ պետք ե ընդունակ լինեն ընկնելու տարատոյա-
կանության մեր պատմական մեղքի մեջ:

«Պուլետարիյ», № 35, 1908 թվի սեպտեմբերի 11
(24)-ին: «Գրվածքների ժաղովածու», հատոր X, մասն 1-ին,
էջ 113-118:

I. Ն. ՏԱԼԵՏՈՅՑ ՅԵՎ ԱՐԴԻ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ.

Ինուատուանի գրեթե բոլոր մեծ քաղաքներում ուսու-
բանվորներն արձագանքեցին և. Ն. Տալետոյի մահվան և
այսպես թե այնպես արտահայտեցին իրանց վերաբեր-
ությունները դեպի այն գրողը, վոր ավել ե՝ նրան ամբողջ աշ-
խարհի մեծագույն գրողների շարքը դասող գեղարվեստա-
կան ամենանշանավոր յերկեր, դեպի այն մտածողը, վորը
հակայական ուժով, վստահորեն, անկեղծությամբ տուա-
ջադրեց մի շարք այնպիսի խնդիրներ, վորոնք վերաբե-
րում են արդի քաղաքական և հասարակական կառուց-
վածքի հիմնական գծերին: Ընդհանուր առումով, այդ վե-
րաբերմունքն արտահայտված ե պետական Յ-րդ Դումայի
բանվորական պատվամավորների կողմից ուղարկված հե-
ռագրում, վոր տպագել ե թերթերի մեջ:

Լև Տալետոյն իր գրական գործունելությունն սկսել ե ^V
ճորտատիրության գյուղացիության պահին, սակայն՝ այնպիսի
մի ժամանակ, յերբ ճորտատիրությունն ակնհայտորեն
ապրում եր վերջին իր օրերը: Տալետոյի գլխավոր գոր-
ծունելությունը կատարվել ե ոռոսական պատմության այն
շրջանում, վորն ընկնում է 1861 և 1905 թվականների
յերկու դարձակետերի միջև: Ամբողջ այդ շրջանի ընթաց-
քում ճորտատիրական իրավունքի հետքերը, նրա անմի-
ջական վերապրումները լիսվին թափանցում ելին յերկը՝
վող տնտեսական (մասավանդ՝ գյուղական) և ամբողջ
քաղաքական կյանքը: Յեվ միենույն ժամանակ՝ հենց նույն
այդ շրջանը մի շրջան եր, յերբ ներքեցից՝ կապիտալիզմն
ուժպին աճում եր և վերկից՝ պատվաստվում:

Ինչու ելին արտահայտվում ճորտատիրական իրա-
վունքի վերապրումները: Ամենից ավելին և պարզուն

կերպով նրանով, վոր Ռուսաստանում — գերազանցապես յերկրագործական մի յերկրում, — յերկրագործությունը՝ դրանց վում եր այդ պահին սնանկացած, աղքատացած գյուղացիների ձեռքին, վորոնք վարում ելին իրանց հնացած նախնական տնտեսությունը ճորտատիրական այն հին հողաբաժնների վրա, վորոնք կարված ելին հոգուտ կալվածատերերի 1861 թվին։ Իսկ մյուս կողմից՝ յերկրագործությունը գտնվում եր կալվածատերերի ձեռքին, վորոնք կենտրոնական Ռուսաստանում հողը մշակում ելին գյուղացիների աշխատանքով, գյուղացիական արորի, գյուղացիական ձիու միջոցով՝ «Կտրած, սահմանորոշ հողերի», խոտհարքի, ջուր տալու տեղերի ոգտագործման համար և այլն։ Էստ երւթյան, այս նույն հին անտեսության ճորտատիրական սիստեմն եր։ Քաղաքական կարգը Ռուսաստանում այդ շրջանում նույնպես ըստ ամենալինի լեցուն եր ճորտատիրությամբ։ Այդ յերեսում թե՛ պետական կառուցվածքից՝ մինչև 1905 թվին կատարված փոփոխություններին դիմելու առաջին փորձերը, թե ազնվական-հողատերերի գերաճնշող ազգեցությունից պետական գործերի վրա, և թե չինովնիկների ամենակարողությունից, վորոնք նույնպես ըստ մեծի մասին և մանավանդ՝ բարձրությունները — պահպանական — հողատերերից ելին։

Այս հին նահապետական Ռուսաստանը 1861 թվականից հետո՝ համաշխարհային կապիտալիզմի ազգեցաւթյամբ՝ սկսեց արագորեն քայլքայվել։ Գյուղացիներն աննախընթացորեն սովահարվում, կոտորվում, ավերվում ելին և փախչում դեպի քաղաքները՝ յերեսն ի վայր ձգելով իրանց հողերը։ Արագորեն կառուցվում ելին յերկաթուղիներ, Փարբիկաներ և գործարաններ — շնորհիվ քայլքայված գյուղացիների «եժան աշխատանքի»։ Ռուսաստանում զարգանում եր ֆինանսական խոշոր կապիտալը, խոշոր առևտուրը և արդյունաբերությունը։

Հին Ռուսաստանի բոլոր հնամենի «հիմունքների»

այդ արագ, դժվարին, կտրուկ կործանումն եր, ահա, վոր արտացոլվեց Տալստոյ-գեղարվեստագետի յերկերում, Տալստոյ-մտածողի հայացքներում։

Տալստոյը հրաշալիորեն եր ճանաչում գյուղական Ռուսաստանը, կալվածատիրոջ և գյուղացու կենցաղը։ Իր գեղարվեստական յերկերում նա այդ կենցաղի այնպիսի նկարագրություններ ե տվել, վորոնք համաշխարհային դրականության լավագույն յերկերի շաբթին են պատկանում։ Գյուղական Ռուսաստանի բոլոր «հնամենի հիմունքների» կտրուկ կործանումը սրեց նրա ուշադրությունը, խորացրեց նրա հետաքրքրությունը զեպի այն ամենը, ինչ վոր կատարվում եր նրա շուրջն ու շրջապատում և առիթ դարձավ նրա ամբողջ աշխարհահայացքի բեկման։ Իր ծագմամբ և գաստիրակությամբ Տալստոյը պատկանում եր Ռուսաստանի բարձրաստիճան կալվածատիրության դասին։ Նա խզեց իր կապերը այդ միջավայրի սովորական բոլոր հայացքներից և իր վերջին յերկերում կրքոտ քննադատությամբ հարձակվեց իր ժամանակակից պետական, յեկեղեցական, հասարակական — տնտեսական բոլոր կարգերի վրա, վորոնք հիմնված են սասսաների ստրկացման, նրանց աղքատության վրա, գյուղացիների և, ընդհանրապես, մանրանուեսատերերի մասնկացման և այն բռնության ու կոծիքի վրա, վորոնցով վերեկից մինչև ներքեած ված և ժամանակակից ամբողջ կյանքը։

Տալստոյի քննադատությունը նորություն չե։ Նա չի ասել և վահ մի այնպիսի բան, վոր նրանից շատ պաշտոն թե յեվորպական և թե ուսական գրականության մեջ ասած չինելին նրանք, ովքեր կանգնած ելին աշխատավորության կողմը։ Սակայն Տալստոյի քննադատության յուրահատկությունը և նրա պատմական նշանակությունն այն է, վոր նա հանճարեղ գեղարվեստագետին միան հատուկ ուժով և արտահայտում Ռուսաստանի ժողովրդական ամենալայն մասսաների հիշալ շրջանում կատարված

հայացքների բեկումը և հատկապես՝ զյուղական, գյուղացիական Ռուսաստանում։ Վորովհետեւ ժամանակակից կարգերի քննադատությունը Տալստոյի մոտ նույն այդ կարգերի՝ ներկայիս բանվորական շարժման ներկայացուցիչների կողմից արված քննադատությունից տարբերվում է նրանով, վոր Տալստոյը կանգնած է նախապետական, պարզամիտ զյուղացու տեսակետի վրա, Տալստոյը փոխանցում է նրա հոգեբանությունն իր քննադատության, իր ուսմունքի մեջ։ Տալստոյի քննադատությունը հենց այն պատճառով է իցված այդքան խոր զգացմունքով, այդ պիսի կրքոտությամբ, համոզիչ ուժով, թարմությամբ, անկեղծությամբ, ժողովրդական մասնաների թշվառության իմականական գտնելու և «մինչև արժատը» հասնելու անվեհերությամբ, — վորովհետեւ այդ քննադատությունն իրոք վոր արտ սհարցում է այն միլիոնավոր զյուղացիների հայացքների բեկումը, վորոնք դեռ նոր նոր ելն ագատազրվել ճորատիրությունից և առեսել ելին, վոր այդ ագատությունը հավասար է քայլաման, սովանահության, քաղաքալին «տականքների» շրջապատում սպառող անապաստան կյանքի և այլ նորանոր սարսափների։ Տալստոյն այնպիսի հարազատությամբ է արտահայտում նրանց արամագրությունը, վոր ինքն ել իր ուսմունքի մեջ է մացնում նրանց պարզամտությունը, նրանց խորթությունը քաղաքականությունից, նրանց միստիցիզմը, աշխարհից հեռանալու ցանկությունը, «չարին չհակառակելը», կապիտալիզմի ու «փողի իշխանության» հասցեին ուղղված անզոր անեծքները։ Միլիոնավոր զյուղացիների քողոքը և նրանց հուսահատությունը, - ահա թե ինչն է միաձուլվել Տալստոյի ուսմունքի մեջ։

Ժամանակակից բանվորական շարժման ներկայացուցիչները գտնում են, վոր բողոքելու հիմք, հիրավի, շատ կա, բայց հուսահատվելու բնագ աեղի չկա։ Հուսահատությունը հատուկ է այն դասակարգերին, վորոնք կործան-

վում են, բայց վարձու բանվորների դասակարգն անխուսափելիորեն աճում և զարգանեւմ և ամբապնդվում և կապիտալիստական յուրաքանչյուր հասարակության մեջ, այդ թվում նաև՝ Ռուսաստանում։ Հուսահատությունը հատուկ է նրանց, ովքեր չեն հասկանում չարիքի պատճառները, ովքեր չեն տեսնում վրկության յելքը և ընդունակ չեն պարտքարելու։ Ժամանակակից արդյունաբերական պրոխարիտատն այդ դասակարգերի թվին չի պատկանում։

«Խաշ պուտ» № 7, 1910թ. նոյեմբ. 28-ին ստորագրությանը, — Վ. Իլյին։ «Գրվածքների ժողովածու (ոռուսերեն) հասար 20, մասն 1, էջ 321—333.

Եր մահից վոչ շատ առաջ Լև Տալստոյն ասել եր և ասել եր «տալստոյականության» վատթարագույն կողմերի համար բնորոշ ցավակցությամբ և ափսոսանքով, թե ուստի ժողովուրդը արտասովուր արագությամբ «սովորեց հեղափոխություն անհել»։ Մենք ցավում ենք միայն այն մասին, վոր ուստի ժողովուրդը այդ գիտությունը մինչև վերջը չսովորեց, մի գիտություն, առանց վորի նա դարեր շարունակ կարող է Պուրիշկիների ստրուկը մնալ։ Սակայն, ճշմարիտ և այն, վոր ուստական պրոլետարիատը ձգտելով հասարակության լիակատար սոցիալիստական վերակազմության - տվեց ուստի ժողովրդին ընդհանրապես և ուստի զյուղացուն առանձնապես այդ դիտության անփոխարինելի գասերը։ Ստոլիպինի և վոչ մի կախաղանը, «վեխականների» վոչ մի ճիգուռ ջանքը այդ դասերը մոռանող տալ չեն կարող։ Դասը արված է։ Դասը յուրացվում է։ Դասը պիտի կը կնքի։

«Գրվածքն. Ժող.,» համ. XI. մասն 2-րդ, էջ 393։

L. Ն. SULUSAN

Մեռավ Իւ Տալստոյը: Նրա համաշխարհային նշանակությունը, վորպես գեղարվեստագետի, նրա համաշխարհային հոչակը, վորպես մտածողի և քարոզչի, — թե այս և թե այն յուրորինակ կերպով արտացոլում են ոռւսական հեղափոխության համաշխարհային նշանակությունը:

Վորպես մեծ գեղարվեստագետ՝ Լ. Ն. Տալստոյը հանգես էեկավ գեռես ճորտատիրական իրավունքի ժամանակ: Կես դարից ավելի տեսող զբական իր վործունելության ընթացքում մի շարք հանճարեղ յերկերի մեջ նա նկարություն եր գերազանցապես հին, մինչհեղափոխական Ռուսաստանը, վոր 1861 թվականից հետո⁵) յել կիսաճորտական վիճակում եր մնացել՝ նկարագրում եր զյուղական Ռուսաստանը, կալվածատիրոջ և գյուղացու Ռուսաստանը: Նկարագրելով Ռուսաստանի պատմական կյանքի այդ շրջանը, Լև Տալստոյը կարողացավ այնքան խոշոր խնդիրներ առաջնորդել իր աշխատություններում, կարողացավ բարձրանալ գեղարվեստական աշնալիուի մի ուժի, վոր նրա յերկերը առաջնագույն տեղը զբավեցին համաշխարհային գեղարվեստական գրականու. Թիւն մեջ՝ ճորտատերերից ճնշված յերկրներից մեկում հեղափոխության նախապատրաստության դարաշրջանը՝ շնորհիվ Տալստոյի հանճարեղ լուսաբանության՝ հանդես էեկավ, վորպես մի քայլ դեսի առաջ վողջ մարդկության գեղարվեստական գարզացման մեջ:

Հ Տալստոյ-գեղարվեստագետը հայտնի յե աննշան փոքրամասնության նույնիսկ Ռուսաստանում: Նրա մեծ գործերը իրավես բոլորի սեփականությունը դարձնելու համար, անհրաժեշտ ե պայքարել և պայքարել այնպիսի հա-

սարակարգի դեմ, վորը տաժանելի աշխատանքի, չըավորության, խավարի և մոռացվածության և դատապարտել միլիոնավոր և տասնյակ միլիոնավոր մասսաների, — անհրաժեշտ ե սոցիալիստական հեղաշրջում:

Յեկ Տալստոյը վոչ միայն գեղարվեստական յերկեր և տվել, վօրոնք մշտապես բարձր են գնահատվելու և կարդացվելու յեն մասսաների կողմից, յերբ վոր նրանք կյանքի մարդկային պայմաններ կստեղծեն իրանց համար, խորտակելով կալվածատերերի և կապիտալիստների լուծը, — նու կարողացավ զարմանալի ուժով արտացոլել ներկա կարդից ճնշված ժողովրդական լայն մասսաների արամազրությունը, նկարագրել նրանց վիճակը, արտահայտել նրանց բողոքի և զարգությի տարրերային զգացմունքը: Պատկանելով զլիավորապես 1861—1904 թվականների դարաշրջանին, Տալստոյը զարմանալի ուելեֆ կերպով մարմնացրել ե իր յերկերում թե վորպես գեղարվեստագետ և թե վորպես մտածող ու քարոզիչ — ոռւսական առաջին հեղափոխության պատմական յուրորինակության գծերը, նրա ուժը և նրա թուլությունը:

Մեր հեղափոխության առանձնահատուկ գլխավոր գծերից մեկն ել այն ե, վոր դա—գուռդացի ական բուրժուական հեղափոխություն եր՝ կապիտալիզմի շատ բարձր զարգացման դարաշրջանում, ամբողջ աշխարհում և համեմատաբար բարձր Ռուսաստանում: Այդ — բուրժուական հեղափոխություն եր, վորովհետեւ զրա անմիջական նպատակն եր — ցարական ինքնակալության, ցարական միապետության տապալումը և կալվածատիրական հողատիրության կործանումը, այլ վոչ թե — բուրժուազիայի տիրապետության խորտակումը: Այս խնդիրն առանձնապես չեր զիտակցում գլուղացիությունը, չեր զիտակցում զրա տարրերությունը պայքարի ավելի մոտիկ և անմիջական խնդիրներից: Յեկ ալդ — զիուղացիական բուրժուական հեղափոխություն եր, վորովհե-

տե որեւէկտիվ սլայմաններն առաջին հերթին դրել ելին զուղացիության կյանքի արմատական պայմանների փոփոխաւթյան խնդիրը, հին միջնադարյան հոգաաիրության բեկան, կապիտալիզմի համար «հող պատրաստելու» խընդիրը. որեւէկտիվ պայմանները զյուղացիական սասսաններն առաջ քաշեցին դեպի ավելի կամ պակաս ինքնուրույն պատմական գործողության առարեց:

Տալստոյի յերկերում արտահայտվել են հենց զյուղացիական մասսայական շարժման և ուժը, և թուլությունը, և հզորությունն ու սահմանափակությունը. Նրա չերմաշունչ, կրքոտ, հաճախ՝ անողոքաբար-սուր բողոքն ընդդեմ պետության և արքունական—պաշտոնական յեկեղեցու արտահայտում և պրիմիտիվ զյուղացիական դեմոկրատիական զարությունը, այն դեմոկրատիայի, վորի մեջ ձորտափակական իրավունքի, չինովնիկական կամայականության և կողոպուտի, յեկեղեցական ճիղվիտականության, խարեւության և խարդախության դարերը չարության և ատելության լեռներ են կուտակել Հողի մասնավոր սեփականության նրա անշեղ ժխտումը արտահայտում և զյուղացիական մասսայի հոգեբանությունը պատմական այնպիսի մի մոմենտում, յերբ միջնադարյան հին հոգաաիրությունը—թե կարգածատիրական և թե արքունական—«նաղելայինը» — այլ ևս վերջնականապես անհանդուրժելի մի արդելք եր դարձել յերկրի հետագա զարգացման համար և յերբ այդ հին հոգաաիրությունը անխուսափելիորեն յենթակա յեր ամենակարուկ, ամենադաման: Անդադրում, ամենախորին զյուցմունքով և ամենաբրցավառ զարությով լի կապիտալիզմի մերկացումը գալիս են արտահայտելու ամբողջ յերկունքն ու սարսափը նահապետական այն զյուղացու, վորի վրա յեր սկսել առաջ խաղաղ ինչ վոր նոր, անտեսանելի, անմեկնելի մի թշնամի, վոր գալիս եր քաղաքի կամ թե արտասահմանի ինչ վոր անհայտությունից, կործանելով զյու-

դական կենցաղի բոլոր «հիմունքները», բերելով իր հետ չաեմնափած քայլայումներ, չքավորություն, սովամահություն, վալրենացում, պոռնկություն, սիֆիլիս, — «նախնական կուտակման» դարաշրջանի⁶) բոլոր այդ աղետները, վորոնք հարյուր անգամ ավելի սրված ելին, ուռւսական հողի վրա փոխազրելով պ. կուպոնի մշակած կողոպուտի ամենանորագույն ձեերը:

Սակայն՝ ջերմաշունչ բողոքական, կրակոտ մերկացնող և մեծ այդ քննադատը, իր յերկերում ցուցահանեց միաժամանակ մուսաստանը պատող ճգնաժամի պատճառների և ճգնաժամից գուրս գալու միջոցների այնպիսի մի անհասկացողություն, վորպիսին հատուկ է միայն նահապետական, պարզամիտ գլուղացուն, այլ վոչ թե յեկեղեցականորեն—կրթված զրականագետին: Ճորտափակական, և պոլիցիական պետության, միապետության դեմ մղող պայքարը նրա մոտ քաղաքականության ժխտման եր վերածում, հասցնում և «չարին չնակառակերու» ուսմունքին, հասցըրեց կատարյալ հեռացման 1905—1907 թվականների մասսաների հեղափոխական պայքարից: Արքունական յեկեղեցու դեմ մղվող պայքարը զուգագրվում եր մի նոր, զտված կրօնի քարոզի հետ, այսինքն՝ մասսաները մնանելու համար պատրաստվող մի նոր, զտված և առավել նրբին թուինի հետ: Հողի մասնավոր սեփականության ժխտումը մղում եր նրան վոչ թե դեպի ամբողջ պայքարի կենարոնացումը ընդգենմ իրական թշնամու, ընդգեմ—կալվածտիրական հողատիրության և նրա իշխանության քաղաքական գործիք-այսինքն՝ միապետության, այլ վեպի յերազական, տարտամ, անգոր հառաջանքները: Կապիտալիզմի և մասսաներին նրա պատճառած աղետների մերկացումը, զուգագրվում եր միանգամայն անտարբեր վերաբերմունքի հետ դեպի ազատազրական այն համաշխարհային պայքարը, վոր մղում և միջազգային սոցիալիստական պրոլետարիատը:

Տալստոլի հայացքների հակասությունները — սոսկ նրա անհատական մաքի հակասությունները չեն, այլ՝ անդրադարձումը այն ծալրաստիճան բարդ, ներհակ պայմանների, սոցիալական ազգեցությունների, պատմական տրադիցաների, վորոնք բնորոշում ենին տարբեր դասակարգերի և ուստական հասարակության տարբեր շերտերի հոգեբանությունը հետոնք փորմյան, սակայն սինչեղափոխական դարաշըանում:

Յեկ այս իսկ պատճառով Տալստոլին ուղիղ կերպով գնահատական տալը հնաբավոր ե՝ միայն այն դասակարգի տեսակետից, վորն իր քաղաքական դերով և իր պայքարով հեղափոխության ժամանակ, այդ հակասությունների առաջին անգամ կատարվող լուծման պահին, ապացուցեց վոր ինքը կոչված ե առաջնորդը հանդիսանալու ժողովրդի ազատության և մասսաները շահագործման լծից ազատագրելու համար մղվող պայքարում, ապացուցեց իր անկաշառ նվիրվածությունը դեմոկրատիայի գործին, նաև իր ընդունակությունը մաքառելու բուրժուական (սկզ թվուժ նաև — գյուղացիական) դեմոկրատիայի սահմանափակության և անհետողականության դեմ՝ այս ամենը հնարավոր ե միմիայն սոցիալ — դեմոկրատական պրոետարիատի տեսակետից:

Նայեցէք, թե ինչպիսի գնահատական են տալիս Տալստոլին կառավարական թերթերը։ Նրանք կոկորդիլոսի արցունքներ են թափում, հավատացնելով, վոր հարգում են «մեծ զրոյին» և միաժամանակ պաշապանելով «սըրբազն» սինոդը։ Իսկ սրբազն հայրերը հենց նոր միայն առանձնահատուկ նողկալի մի ստորություն արին, տերտերներ ուղարկելով մահացողի մոտ, վորպեսզի խարեն ժողովրդին և ասեն, թե՝ Տալստոյը «զղացել ե»։ Սրբազն սինոդը անջատել ե Տալստոլին յեկեղեցուց։ Ավելի լավ։ Նրա այս սիրագործությունը հաշվի կառնվի ժողովրդական հաշվեհարդարի ժամին՝ փարաջական չինովիլ-

ների, ի Քրիստոս ժանդարմաների, խավարադավ ինկվիզիտորների⁷) գլխին արդար դատաստանն անելիս, վորովհետեւ սրանք ելին, ահա, վոր աջակցում ելին հրեւական ջարդերին և ցարական սեհարլուրյակային վոհմակի բոլոր այլ սխըագործություններին։

Նայեցէք, թե ինչպես են գնահատում Տալստոլին վրեբալ թերթերը։ Նրանք ջանում են մի կերպ դուրս նեղ վիճակից այն սնամեջ, արքունակիբերալ, հնագալ նեղ վիճակից այն սնամեջ, արքունակիբերալ, հնամաշակերպ հայնի, «աշխարհին միահամուռ ձայնակցության», «ճշմարտության, բարության զաղափարների» մասին և այն, վորոնց համար Տալստոյն այնպիս անխնախարագանում եր—և շատ իրավացի յեր խարագանում — բուրժուական գիտությունը։ Նրանք չեն կարող պարզ և վորոշակի կերպով արտահայտել իրանց գնահատականը Տալստոլի այն հայացքների վերաբերմամբ, վոր կապված են պետության, յեկեղեցու, հողի մասնավոր սեփականության կապիտալիզմի հետ, և չեն կարող բնավ վոչ այն պատճառով, վոր ցենզուրան նրանց խանգարում ե, — ընդհակառակը՝ ցենզուրան նրանց ոգնում ե դժվարին կացությունից դուրս գալու, — այլ այն պատճառով, վոր Տալստոյի քննադատության մեջ յեղած յուրաքանչյուր դրությունը մի ապահով ե բուրժուական լիբերալիզմին, վորովհետեւ մեր ժամանակի ամենացավոտ, ամենաանիծալ հարցերի ալղորինակ աներկուող, բացահայտ անողոքաբար-հատուառաջադրությունից Տալստոյի կողմից՝ հարվածում ե մեր լիբերալ (և լիբերալ-նարողներական) խուսափողական հրապարակախոսության «քաղաքակիրթ» ստերի շարլոն ֆրազների մաշված հնարների յերեսին։ Լիբերալները սարի պես պաշտպան են կանգնած Տալստոյին, սարի պես զեմ են կանգնած սինոդին — և միաժամանակ՝ նրանք... «վեխականների»⁸) հետ են, վորոնց հետ «կարելի յել վիճել» բայց վորոնց հետ «պետք ե» հարմարվել

մեկ կուսակցության մեջ, վորոնց հետ «պետք ե» գործեք միասին գրականության և քաղաքականության պապարեզում: Իսկ վեխականներին համբուրում ե Անտոնի Վալինսկին⁹):

Լիբերալներն տռաջ են քաշում այն միտքը, թե Տալլստոլը—«մեծագույն խեղճն ե»: Միթե այս դատարկ մի ֆրազ չե, վոր հազար ու մեկ ձևով կրկնում են և «Նուվուր Վրեմյան»¹⁰) և բոլոր նրա նմանները: Միթե այս չի նշանակում գանց առնել դեմոկրատիայի և սոցիալիզմի այն բոլոր կոնկրետ խնդիրները, վոր առաջ ադրել եր Տալստոլը: Միթե այս մերձեցումը առաջին պահում չի դնում հենց այն, ինչվոր արտահայտում ե Տալստոլի նախապաշտունքը, այլ վոչ թե նրա բանականությունը, հենց այն, ինչ վոր նրա մեջ պատկանում ե տնցյալին, այլ վոչ թե ապագային, նրա քաղաքականության ժխտմանը, նրա բարոյական ինքնակատարելագործման քարոզին, այլ վոչ թե նրա բուռն բողոքին, ընդդեմ ամեն տեսակ դասակարգակին տիրապետության:

Մեռավ Տալստոլը, և անցյալի գիրին անցավ սինչ-նեղափոխական Ոռուսաստանը, վորի թուլությունն ու անգորությունը արտահայտվեցին փիլիսոփայության մեջ և նկարագրված են հանձարեղ գեղարվեստագետի յերկերում: Սակայն, նրա թողած ժառանգության մեջ կա մի բան, վոր չի անցել անցյալի գիրկը, վորը պատկանում է ապագային: Այդ ժառանգությունը վերցնում ե և այդ ժառանգության վրա աշխատում ե ռուսական պրոլետարիատը: Նա կբացատրի աշխատավոր և շահագործվող մասսաներին պետության, յեկեղեցու, հողի մասնավոր սեփականության տալստոլական քննադատության նշանակությունը — վոչ նրա համար, ինարկե, վոր մասսաները սահմանափակվեն բարոյական ինքնակատարելագործմանը և աստվածահաճու կանաչելու մասին հառաջելով, այլ նրա համար, վոր այդ մասսաները վոտքի կանքնեն մի նոր հարված

հասցնելու նպատակով ցարական միապետությանը և կալվածատիրական հողատիրությանը, վորոնք 1905 թվականին փոքր ինչ միայն բեկված ելին և վոր անհրաժեշտ և վոչնչացնելու նա կբացատրի մասսաների կապիտալիզմի տալստոլական քննադատությունը վոչ նրա համար, վոր մասսաները սահմանափակվեն կապիտալի և վողի իշխանության դեմ անեծքները ուղղելով, այլ նրա համար, վոր իրանց կանքի և իրանց պայքարի լուրաքանչյուր քայլափոխում: Այդ մասսաները սովորեն հենվելու կապիտալիզմի տեխնիքական և սոցիալական նվաճումների վրա, սովորեն համախմբվելու սոցիալիստական մարաիկների միասնական միլիոնավոր բանակի շարքերում, վորոնք պետք ե կործանեն կապիտալիզմը և ստեղծեն մի նոր հասարակություն՝ առանց ժողովրդի ազգատության, առանց մարդու կողմից մարդուն շահագործելու:

«Социал Демократ» № 18, 1910 թ. 16 (29) նոյեմբերի «Գրվածքները». հատ. XI, մասն 2-րդ, Էջ 115—119:

L. Ն. ՏԱԼՏՈՅԵ ՌՈՒՍԱԿԱՆ ՌԴՈՐՏՈՒՆԻՄԱՆԵՐԻ
ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՎՐ

(«Փերապահության» հերոսները)

Պարոն Պոտրեսովի¹¹⁾ և ընկ. «Նաշա Զարյա»¹²⁾ ժուռալի հենց նոր միայն ստացված տասներորդ դրբույթը — Տալստոլի գնահատության անհոգության, կամ ավելի ճիշտ ե ասել — անսկզբունքայնության այնպիսի անշշեցուցիչ նմուշներ ե տալիս, վորոնց վրա անհրաժեշտ ե կանգ առնել՝ թեկուղ ե համառոտ կերպով։

Ահա՝ պոտրեսովիսն բանակի նոր բանակացին վ. Բագարովի¹³⁾ հոդվածը Խմբագրությունը համաձայն չե այդ հոդվածի «առանձին դրություններին», չնշելով, իհարկե, թե վորոնք են այդ թեզերը, Այսպես չե վոր շատ ավելի հարմար ե շփոթությունը քողարկել. իսկ ինչ վերաբերում ե մեզ, ապա մենք դժվարանում ենք նշել այդ հոդվածի մեջ այնպիսի դրություններ, վորոնք չըրդովեցնեին գեթ փոքր ինչ մարքսիզմի ջատազով մարդկանց։ «Մեր ինտելիգենցիան, — գրում ե վ. Բագարովը, — ջախջախված ե թթված, մտավոր և բարոյական ինչ վոր տձել լեպի (ԸԼЯ-ԿՈՏ) վերածված մեր ինտելիգենցիան, վոր հասել ե արդեն հոգեսր քայլայման վերջին սահմաններին, — միաձայնությամբ վորպես իր խիզճն ընդունեց Տալստովին — վող չ Տալստոլին։ Այս ճիշտ չե։ Այս — ֆրազ ե։ Մեր ինտելիգենցիան ընդհանրապես և «Նաշա Զարյա»-յի ինտելիգենցիան մասնավորապես, շատ նման ե «թթվածի», սակայն՝ Տալստովին գնահատելու մեջ նա վոչ մի «միաձայնություն» չի հայտաբերել և չեր ել կարող հայտաբերել, վող Տալստովին յերբեք ուղիղ կերպով չեր գնահատել և չեր ել կարող գնահատել։ Յեզ հենց միաձայնության

բացակայությունն ե, վոր քողարկվում ե այժմ հույժ կեղծավոր «Նովոյե Վրեմյալին» ըստ ամենայնի արժանավայել ֆրազներով «խզճի» մասին։ Բազարովը, այդպիսով, վոչ թե մաշառում ե «լեպի» դեմ, այլ՝ իրախուսում ե լեպը։

Բազարովը կամենում ե հիշեցնել այն միքանի անարդարությունները (!) Տալստովի վերաբերմամբ, վորում մեղավոր են ոռւսական ինտելիգենտներն ընդհանրապես, իսկ մենք՝ «արաբեր տեսակի ուաղիկալներս»՝ առանձնապես։ Այստեղ ճշմարիտ ե միայն այն, վոր Բագարովը, Պոտրեսովը և ընկ. — իրոք վոր «արաբեր տեսակի ուաղիկալներ» են՝ այն աստիճան անկախ համատարած «լեպեց», վոր Տալստովի աշխարհահայացքի արժատական անհետենողականությունների և թուլությունների ամենաանթույլատրելի զանցառության պահին, նրանք վեր-վեր ցատկութելով են վագում «բոլորի» յետելց, աղաղակելով Տալստովի վերաբերմամբ ցույց տված «անարդարությունների» մասին։ Նրանք չեն կամենում «արքեցնել» իրենց մեզանում առանձնապես տարածված այն նարկութիկով (քննցուցիկով), վոր Տալստովն անվանում ե՝ «վիճաբանության կառաղություն», — այս հենց այնպիսի ճառերն են, այնպիսի նվազներն են, վոր պահանջում են քաղքենիները՝ անսահման արհամարհանքով յերես դարձնելով ինչ վոր լիովին և հետեղողականորեն պաշտպանվող սկզբունքների համար ծագող վեճերից։

«Տալստովի զլխավոր ուժը հենց այն ե, վոր նա անցնելով այժմյան կրթված մարդկանց համար տիպիկ քայլքայման բոլոր աստիճաններով, կարողացավ գտնել սինթեզը. . .» Ճիշտ չե։ Հենց այդ սենթեզն ե, ահա, վոչ իր աշխարհահայեցողության փիլիսոփայական հիմքերում, վոչ իր հասարակական-քաղաքական ուսմունքի մեջ Տալստովը չկարողացավ, կամ ավելի ճիշտ ե ասել — չեր կարող գտնել։ «Տալստովն առաջինն եր (!), վոր որյեկտիվ դար-

ձրեց, այսինքն՝ վոչ միայն իր, այլև ուրիշների համար ստեղծեց այն գույտ մարդկաւին կրօնը (ընդգծումներն ամեն տեղ Բազարովին են), վորի մասին կոնտը¹⁴⁾, Ֆեյբարախը¹⁵⁾ և ժամանակակից կուլտուրայի այլ ներկայացուցիչները կարող են միայն սուբյեկտիվորեն (!) յերազել» և այն, և այն:

Նման ճառախոսություններն առավել վատթար են, քան սովորական քաղքենիականությունը: «Լեզլ» կեզծ ծաղիկներով զուքելու մի ճիգ ե այս, վոր կարող ե մարդկանց մոլորեցնել միայն: Սրանից ավելի քան կես դար առաջ Ֆեյբարախը, չկարողանալով իր աշխարհահայեցության «սինթեզը գտնել», վոր շատ տեսակետաներից գերմանական դասական փիլիսոփայության «վերջին խոսքն» եր համդիսանում, — մոլորվեց այն «սուբյեկտիվ յերազների» մեջ, վորոնց բացասական նշանակությունը վաղուց արդեն գնահատված եր «ժամանակակից կուլտուրայի» իրապես առաջապոր «ներկայացուցիչների» կողմէց: Հայտարարել այժմ, թե Տալստոյն «առաջինն եր, վոր որիեկտիվացրեց» այդ «սուբյեկտիվ յերազանքները», — նշանակում ե յետ գառնալ նահանջողների բանակը, նշանակում ե շողոքորթել քաղքենիականության, նշանակում ե ձայնակցել վեխականության:

«Ի՞նքնին հասկանալի յե, վոր Տալստոյի հիմնած (!!) շարժումը խորին փոփոխություններ ե ապրելու, յեթե միայն նրան իրապես վիճակված ե պատմա-համաշխարհային խոշոր գեր խաղալու, — նահապետական դրւզացիական կենցաղի իդեալականացումը, ձգտումը գեպի նատուրալ տնտեսությունը և առաջարականության մյուս բազմաթիվ ուսուցիկ գծերը, վոր ներկայումս առաջ են ցցվաւմ (!) և թվուժ են, թե ամենաերականն են, — փաստորեն, սակայն, հենց այն սուբյեկտիվ տարրերն են հանդիսանում, վորոնք տալստովիան՝ «կրոնի» հիմքի հետ անհրաժեշտ կապով չեն շաղկապված:

Յեվ այսպես, ուրեմն՝ ֆեյբարբախի «սուբյեկտիվ յերազանքները» Տալստոյն «որյեկտիվացրեց», իսկ այն, վոր իր գեղարվեստական հանձարեղ յերկերի և իր հակառակություններով լեցուն ուսմունքի մեջ Տալստոյն արտացոլել ե Բազարովի նշան անցյալ դարի Ռուսաստանի տնտեսական առանձնահատկությունները, — այս, ահա, «հենց նրա ուսմունքի սուբյեկտիվ տարրերն են»:

Ահա թե ինչ ե նշանակում մատով կպչել յերկնքին: Բայց պետք ե ասել և այն՝ վոր «ջախջախված և ընկճված ինտելիգենցիալի համար» (և այն՝ ինչպես վերեւում մեջ բերված ե) չկա վոչիչ առավել հաճելի, բաղձալի, սիրելի, չկա վոչինչ, վոր ավելի սազական լինել նրա թժվածության, քան Տալստոյի կողմից «որյեկտիվացրած» ֆեյբարախի արդ «սուբյեկտիվ յերազանքները» և ուշագրության արդ լետքաշումը պատժա-անտեսական և քաղաքական այն կոնկրետ խնդիրներից, վորոնք «ներկայումս ցցվում են մեր առաջ»:

Հասկանալի յե, վոր Բազարովին առանձնապես գուրծի գալիս այն «սուբյեկտությունը», վոր առաջացրեց շարին չհակառակելու ուսմունքը «ուագիկալ ինտելիգենցիալի կողմից»: Բազարովի համար «պարզ ե, վոր պասսիվության և կվիետիզմի մասին այստեղ խոսելու հարկ չկա»: Պարզաբանելով իր միտքը, Բազարովը հիշում է «Իվան. Դուրսակի» հայանի հեքիաթը և առաջարկում է ընթերցողին՝ «պատկերացնել, թե զինվորներին հիմարների դեմ ե ուզարկում վոչ թե տարականների թափափորը, այլ իրենց սեփական խելոքացած իվանը. թե հիմարներից ընտրված և, հետեւաբար՝ իրենց հոգեկան կառուցվածքով նրանց հարազատ զինվորների ոգնությամբ՝ իվանը կամենում և հարկադրել իր հոգատակներին ինչ վոր անարդարացի պահանջներ կատարելու: Միանգամայն հասկանալի յե, վոր գրեթե անզեն և ուզամական գործին անժամնոթ հիմարները չեն ել կարող յերազել իվանի զորքե-

բին հաղթելու մասին, Անգամ իսկ «բռնությամբ ընդդիմադրելու» ամենայեռանգուն փորձ անելիս ել—հիմարները կարող են հաղթել իվանին վոչ թե փիզիկական, այլ սոսկ բարոյական ներգործությամբ, այսինքն՝ իվանի զորքերի բարոյալքման միջոցով միայն»: «Հիմարների ընդդիմադրությունը բռնությամբ, հանգում ե ի վերջո նույն արդյունքներին (միայն թե՝ ավելի վատ և ավելի մեծ զոհերով), ինչ փոր և առանց բռնության արած դիմադրությունը...»: «Զարին բռնությամբ չհակառակելը, կամ ընդհանուրը, միջոցի և նպատակի ներդաշնակությունը (!) բնավ մի գաղափար չե, վոր հատուկ ե միմիայն արտահասարակական, բարոյական քարոզիչներին: Այդ գաղափարը լուրաքանչյուր ամբողջական աշխարհահայեցողության անհրաժեշտ բաղկացուցիչ մասն ե կազմում»:

Այսպես ե դատում, պոռարեսովան բանակի այս նորակոչ բանակալինը: Քննել նրա դատողություններն այստեղ մենք չենք կարող և, թերևս, առաջին նվազ բավական և այդ դատողություններից միայն վերաբերել գլխավորը՝ և ավելացնել չորս բառ.—այս խական վեխականություն ե:

Ականջները ճակատից վեր չեն բաձրանում նյութի մասին լերգած ձոներգի վերջին ակորդներից.—«Կարիք չկա բնավ ներկարացնելու մեր թուլությունը, վորպես մեռմած և վորպես մի գերազանցություն՝ Տալստոլի «կվիետիզմի» և «սահմանափակ բանականության» հանդեպ (իսկ դատողությունների հետևողականության): Այս չպետք է ասել վոչ միայն այն պատճառով, վոր այս հակառակ և ճշգրտության, այլև այն պատճառով, վոր այդ խանդարում ե մեղ սովորելու մեր ժամանակի մեծագույն մարդուց»:

Այդպես: Այդպես: Միայն թե՝ հարկ չկա, պարոններ, զայրանալու և ծիծաղելի սնապարծությամբ ու լուսանքներով պատասխանելու (ինչպես այդ անում ե պ. Պոտը ե-

սովը «Նաշա Զարյա»-ի ԱՀ 8-9-ում), լերբ ձեզ որհնում, հավանություն են տալիս և համբուրում են իզգուները¹⁶): Այդ համբուրների հետքերից սակայն, պոտը եսովյան բանակի թե հին և թե նորակոչ բանակայինները լերբեք չեն կարող մաքրվել:

Այդ բանակի զլիավոր շտաբը «դիպլոմատիկական» մի վերապահում ե կցել Բագարովի հոգվածին: Մակայն՝ դրանից անքան ել լավը չե առանց վորեե վերապահումների տպագրված պ. Նեկեդոմսկու¹⁷) առաջնորդող հոգվածը: Առնելով իր մեջ, —գրում՝ ժամանակակից ինտելիգենցիալի այս ճոռում հոետորը, —և մարմարացնելով ավարտված ձեռվ մուռաստանի ստրկության անկման մեծ դարաշրջանի հիմնական ձգտումներն ու գաղափարները, և Տալստոլը համարդկալին իդեոլոգիական սկզբունքի —խղճի սկզբունքի դադույնը և ամենալիակատար մարմարացումը հանդիսացավ»:

Բում, բում, բում... Առնելով իր մեջ և ավարտված ձեռվ մարմարացնելով լիբերալ-բուրժուական հրապարակախոսության հաստուկ գեկլամացիալի հիմնական ձեռքը, —Մ. Նեկեդոմսկին համամարդկալին իդեոլոգիական սկզբունքի—գատարկախոսության սկզբունքի զտագույն և ամենալիակատար մարմարացումը հանդիսացավ:

Յեվս մեկ, մի վերջին ասացվածք.—«Տալստոլի բոլոր այս լերպական յերկրպագուները, բոլոր այս տարբեր անուններ ունեցող Սնատոլ Ֆրանսները¹⁸) և պատգամավորական պալատները, վոր մոտ ժամանակներս ձայների ձնշող մեծամասնությամբ զիեարկեցին մահապատիժը վերացնելու դեմ, իսկ այժմ հոտնկալս են հարգում ամբողջական այդ մեծ մարդու հիշատակը, միջակության, կիսատականության վերապահականությունների ամբողջ այս թագավորությունը, —վորպիսի փառահեղ, վորպիսի հզոր զուտ ու անխառն մետաղից ձուլված կերտվածքի նման ե կանգնում մեր առջե այդ Տալստոլը՝ միասնական սկզբունքի այդ կենդանի մարմարացումը»:

Ուֆ... Սիրուն ել խոսում - բայց և ճիշտ չե ախր այս քոլորք: Վհչ Տալստոյի կերտվածքը ձուլված է, վհչ միասնական, վհչ անխառն և վհչ ել մետաղից: Յեկ «բոլոր այս» բուրժուական լերկրպագուները հենց այս ե, վոր «ամբողջականության» կողմնակից չեն, նրանք հենց նրա համար ել «հոտնկալս հարգեցին» նրա հիշատակը, վոր նա ամբողջականությունից նահանջել եք:

Մեկ հատիկ լավ բառ միայն թոցրեց հանկարծապ. Նեկեդոմսկին: Յեկ արդ բառը - վերապահականությունը - նույնքան լավ հանձնարարական ե «Նաշա Զարյա»-յում նստած պարոնների համար, ինչպես և ինտելիգենցիայի վերոհիշյալ այն բնորոշումը, վոր տվել ե պ. Վ. Բագրատովը: Մեր առջե այստեղ՝ բացահայտորեն և լիովին «վերապահանության» հերոսներն են կանոնած: Պոտրեսովը վերապահություն ե անում, թե համաձայն չե մախիստների հետ, թեպետ և պաշտպանում ե նրանց: Խմբագրությունը վերապահություն ե անում, թե համաձայն չե Բազարովի «առանձին դրություններին», թեպետ և ամենքի համար պարզ ե, վոր ինդիբն այստեղ առանձին դրությունների մասին չե: Պոտրեսովը վերապահություն ե անում, թե իդգուեց նրան զրպարտել ե: Մարտովը¹⁹⁾ վերապահություն ե անում թե ինքն ամբողջովին չե համաձայն Պոտրեսովի և լիվեցկու²⁰⁾ հետ, թեպետ և հենց նրանց ե, վոր իսպաս ե բերում նա իր քաղաքական հավատարիմ ծառայությունը: Նրանք բոլորն ել միասին վերապահություն են անում, թե համաձայն չեն Զերևանինի¹²⁾ հետ, թեպետ և ավելի հավանություն են առաջ նրա լերկրորդ լիկիդ: Դատորական գրքույկին, վորն ավելի լե գալիս խորացնելու առաջին ծնունդի «վողին»: Զերևանինը վերապահություն ե անում, թե համաձայն չե Մասլովի²²⁾ հետ: Մասլովը վերապահություն ե անում թե համաձայն չե Կառլցիւ²³⁾ հետ:

Նրանք բոլորն ել միասին համաձայն են իրար հետ

նրանով միայն, վոր համաձայն չեն Պլեխանովին²⁴⁾ և վոր նա զրպարտորեն մեղաղբում ե նրանց լիկվիդատորության մեջ՝ ինքն ել իբր թե, անկարող լինելով բացատրելու իր ալժմյան մերձեցումը լերեկվան իր հակառակորդների հետ:

Վերապահությունների սիրահար մարդկանց համար անհասկանալի այս մերձեցումը բացատրելուց ել առավել հեշտ բան չկա: Յերբ մենք շոգեշարժ ունեինք, մենք առնեառութեղ կերպով տարածայն ելինք իբարից այն առթիվ, թե՝ համապատասխանում ե արդյոք այդ շոգեշարժի ամբության, վառելիքի պաշարներին և այն, մի արագությունն ասենք թե, ժամը 25 կամ 50 վերստ: Վեճն այս, ինչպես և ամեն մի ըստ ամենայնի հուզող խնդրի մասին տեղի յեր ունենում կրքոտությամբ և հաճախ՝ կատաղությամբ: Այդ վեճը բառիս բուն իմաստով՝ յուրաքանչյուր այն խնդրի մասին, վօրի շուրջը ծագում եր, - բոլորի աշը առջե ե, բացահայտ ե, հասցված ե մինչեւ վերջը՝ վորեւ վերապահումներով կոծկված չե: Յեկ վոչ վորի մտքով անդամ չի անցնում վորեւ բան յետ վերցնել, կամ թե նվալ ու տնքալ «վեճի կատաղության» առթիվ: Բայց յերբ վոր շոգեշարժը վթարման հանդիպեց, յերբ նա ընկած ե ճահճում՝ զրջապատված «վերապահաեր» ինտելիգենտներով, վրանք ստորաբար քրքջում են այն առթիվ: Թե հիմա այլիս «լիկվիդացիայի լենթարկելու բան ել չմնաց», վորովիետե շոգեշարժն այլիս չկա, — այն ժամանակ մեր յերեկվա «կատաղի վիճաբանողներիս», մեկ ընդհանուր դործ մոտեցնում ե իրար: Վոչինից չհրաժարվելով, վոչինչ չմոռանալով, չանելով վոչ մի խոստում տարածայնությունների վերացման մասին, — մենք բոլորս միասին միենույն ընդհանուր գործն ենք կատարում: Մենք մեր ամբողջ ուշադրությունը և բոլոր ջանքերը ուղղում ենք այն նպատակին, վոր վեր բարձրացնենք շոգեշարժը, նորոգենք այն, ամրացնենք, ուժեղացնենք, դնենք ուելսերի վրա: —

Հարժման արագության և այս կամ այն սլաքները դարձ-
նելու մասին մենք դեռ հետո ել ժամանակ կունենանք
վիճելու։ Այսորվա դժվար ժամանակների որվա խնդիրն
եւ ստեղծել այնպիսի մի բան, վոր ի վիճակի կլինի իւս
մղելու «վերապահասեր մարդկանց» և այն «թթված ին-
տելիդենտներին, վոր ուղղակի կամ անուղղակի կերպով
պաշտպանում են թագավորող համատարած «լեպը», Որվա
խնդիրն ե—թեկուզ և ամենադժվարին պայմաններում—
փորձել մարքսիստական աշխարհաճայիցողության և նրան
համապատասխան վերնաշենքերի հանքը, արզունահանել
չըա լերկաթը, ձուլել պողպատը։

«Мысль», № 1, 1910 г. членов редакции, в. п. автора-
членов журнала. «Философ. фил.» 5-я, маин. 2-я, № 143-147.

ՏԱՐԱԾՐՁԱՆԵՐ

Այս գարաշը ջանը, վորին պատկանում է Լև Տալստովը
և վորը զարմանալի ցայտուն կերպով արտահայտվել ե ինչ-
պես նրա գեղարվեստական հանձարեղ լեռկերում, այնպես
ել նրա ուսմունքի մեջ, դա - 1861 թվից մինչև 1905
թվականը տեսող գարաշը ջանն եւ ճիշտ ե, Տալստովի գրա-
կան գործունեյությունն սկսվել ե ավելի վաղ և վերջա-
ցել ե ավելի ուշ, քան սկսվել և վերջացել ե այդ դարա-
շրջանը, սակայն՝ վորպես գեղարվեստակետ և վորպես մը-
տածող՝ Տալստոյը ձևավորվել ե հենց այդ ժամանակա-
շրջանում, վորի անցողական բնությը ծնունդ ե տվել թե
Տալստովի լեռկերին և թե՝ «ալստոյականության» բո-
յոր առանձնահատուկ գծերին:

գոր առանձնահատուկ գժերիս:
Կ. Լևինի բերանով «Աննա կարենինայում» էւ Տալմ-
անոյը չափազանց ցայտուն կերպով եւ արտահայտվել թե
ինչն եր կազմում ուրսական պարմության շրջադար-
ձու առ կիսառարի բնթագրում:

«...Բերքի, բանվորներ վարձելու և այլ նման գրուց-
ները, վոր՝ Լիինը գիտեր՝ ըստունված և ինչ վոր ստոր
կարգի բաներ համարել, այժմ Լիինի համար միակ կարե-
պոր գրուցներն ելն»:

«Այս, թերես, կարեոր չեք ճորտատիրական իրավունքի ժամանակ, կամ՝ անկարեոր եւ Անգլիայում։ Յերկու դեպքում ել պայմաններն ինընին վորոշված են։ Բայց մեզ մոտ այժմ, յերբ ամեն ինչ տակն ու վրա յեւ յեղել և դեռ նոր-նոր եւ միայն նստում, այն խնդիրը, թե ինչպես կդասավորվեն այդ պայմանները—միակ կարեոր խնդիրն եւ Ռուսաստանում,—մտածում եր Լիլինը (Յերկեր. հատոր X, էջ 137):

«Մեզանում այժմ այս ամենը տակն ու վրա յե յեղել և դեռ նոր-նոր ե միայն նստում», դժվար ե պատկերացնել 1861—1905 թվականների ժամանակաշրջանի ավելի սուր և հատու բնորոշում: Այս, ինչ վոր «տակն ու վրա» յե յեղել շատ լավ հայանի յե, կամ թե՝ առնվազն ըստ ամենայնի հայանի յե լուրաքանչյուր ուսւ մարդուն: Այդ—ճորտատիրական իրավունքն ե և նրան համապատասխանող ամբողջ «հին կարգը»: Իսկ այն, ինչ վոր դեռ նոր «նստում» ու կարգավորվում ե, այդ բոլորովին անձանոթ, խորթ-անհասկանալի յե բնակչության ամենալայն մասսային: Տալսարուի համար այդ՝ «գեռ նոր-նոր միայն նստող կարգավորվող» բուրժուական հասարակարգը պատկերանում ե շատ մշուշափոր կերպով, վորպես մի խօսքիւակ—Անդիիան: Այս, հենց վորպես խրտվիրակ, վորովհետեւ այդ «Անդիիայի» հասարակարգի հիմնական գծերը իր համար պարզելու ամեն մի փորձը, այդ կարգի կապը կապիսալի իշխանության, փողի գերի: Փոխանակության ծագման և զարդացման հետ, Տալսարուը մխտուժ ե, այսպես ասած, սկզբունքութեն: Նարոդնիկների նման, նաև չեկամենում տեսնել, նա աչք ե փակում, յերես ե դարձնում այն մտքից վոր Ռուսաստանում «հաստատվում» ե մի կարդ վորը վոչ այլ ինչ է քան բուրժուականը:

Արդարացի յե, վոր յեթե վոչ «միակ կարևոր», ապա՝ Ռուսաստանում հասարակական-քաղաքական գործունելության մերձակոր խնդիրների տեսակետից 1871—1905 թվականների դարաշրջանում (և կարելի յե ասել՝ մինչեւ մեր ժամանակն ել) — կարևորագույն խնդիր ե հանդիսանում այն հարցը, թե այդ՝ բուրժուական կարգը, վոր այնպիսի բազմատեսակ ձևեր ե ընդունում Անդիակում, Գեղմանիայում, Ամերիկայում, Ֆրանսիայում և այլն, մեղմութ ինչպես ե «կարգավորվելու»: Սակայն, խնդրի այնպիսի վորոշ, կոնկրետ-պատմական ձևով առաջարկումը Տալսարի համար միանգաման խորթ բան ե: Նա դատում

ե վերացականորեն, ընդունում ե միայն բարոյականության «համարժուական» սկզբունքների, կրոնի հավիտենական ճշմարտությունների տեսակետը, չգիտակցելով, վոր այդ տեսակետը վոչ այլ ինչ ե, բայց յեթե հենց այդ հին («տակն ու վրա յեղած») կարգի, ճորտատիրական կարգի և արևելյան ժողովուրդների կենսակարգի սոսկ իդեոլոգիական արտացոլումը:

«Լուցերնում» (զրված ե 1857 թվին) կե Տալսարուը հայտարարում ե, վոր «քաղաքակրթությունը» բարիք համար ելը—«յերեակայական գիտություն ե», վորը «վոչնշացնում ե մարդուս բնության մեջ յեղած բարու բնագդական, յերանելագույն և սկզբնական պահանջները»: «Մեկ և միմիայն մեկ անմեղանչելի ղեկավար ունենք մենք,— բացականչում ե Տալսարու, — մեզ բոլորիս սոգորող Տիեզերական վողին»: (Յերկեր, հատոր II, եջ 125):

«Մեր որերի ստրկությունը» աշխատության մեջ (զրված ե 1902 թվին), առավել յեռանգով շարունակելով իր այդ դիմումները տիեզերական գոգուն, Տալսարու «կարծեցալ գիտություն» ե անվանում քաղաքատնտեսությունը,²⁵⁾ վորովհետեւ այդ գիտությունը, վորպես «որինակ» ե վերցնում փոքրիկ և բացառիկ գրության մեջ գտնվող «Անդիան», փոխանակ՝ վորպես որինակ վերցնելու պատմական ամբողջ ժամանակաշրջանի համայն աշխարհի մարդկանց զրությունը: «Թե ինչպես ե պատկերանում՝ նրան այդ «համայն աշխարհը», այդ մասին խոսում ե նրա՝ «Պրոգրեսն ու կրթության բնորոշումը» հողվածը (1862 թ.), «Պատմաբանների» այն հայացքը, թե՝ պրոզրեմն լնդհանուր որենք ե մարդկության համար, Տալսարու հերքում ե հիշատակելով «ամբողջ այսպես կոչված Արևելքը» (IV, եջ 162): «Մարդկության առաջընթացքի ընդհանուր որենք գոյություն չունի, — հայտարարում ե Տալսարու, — ինչպես այդ ցուց են տալիս արևելյան անշարժ ժողովուրդները»: ~~Ահա, հենց արևելյան կարգի, ասիական կարգի իդեո-~~

լողիան ե հանդիսանում տալստոյականությունը՝ իր ռեալ, պատմական բովանդակությամբ։ Այստեղից ել բղխում ե նրա և ասկետակմնությունը, և չարին բռնությամբ շհակառակելը, և հոռետեսության խորին շեշտերը, և այն համոզմանը, թե՝ ամեն ինչ-վոչինչ ե, ամբողջ նյութականը - վոչինչ ե («Կյանքի իմաստի մասին, եջ՝ 52), և հավատը դեպի «Վոգին»—«ամեն բանի սկիզբը» վորի հանդեպ մարդը—սոսկ մի «աշխատավոր» ե՝ «իր հոգու փրկության գործին կցված» և այն։ Տալստոյը հավատարիմ ե այդ իդեոլոգիային նաև իր «Կրեցերյան Սոնատում», երբ ասում ե, թե՝ «կնոջ աղատազրությունը համալսարաններում և պալմաններում չե, այլ՝ ննջարանում», նմանապես նաև իր 1862 թվի այն հոդվածում, վորտեղ հայտարարում ե, թե՝ համալսարանները միմիայն «պատրաստում են ջղային հիվանդ լիբերալներ», վորոնք «բնավ պետք չեն ժողովրդին», «աննպատակորեն կտրված են նախկին միջավայրից», «իրանց համար կրանքում տեղ չեն կարողանում գտնել» և այն (II, եջ՝ 136 – 137)։

Հոռետեսությունը, չարին չհակառակելու, «հոդուն» դիմելը, — այս ամենը այնպիսի գարաշրջանում յերևան յեկողեու կող իդեոլոգիա յի, յերբ ամբողջ հին կարգը «տակնու վրա յե յեղել» և յերբ հին կարգի ժամանակ դաստիարակված մասսան, վորը մայրական կաթի հետ ե ծծել այդ սկզբունքները, սովորութները արագիցիաները, հավատալիքները, — չի տեսնում և չի կարող տեսնել, թե ինչպիսին ե այդ նոր «կազմավորվող» կարգը և ապա՝ ինչպես են «կազմավորում» և հասարակական ինչպիսի ուժեր են «կազմավորում» նրան, հասարակական ինչ ուժեր են, վոր ընդունակ են փրկություն բերելու նրան «բեկման» դարաշրջաններին հատուկ առանձնապես սուր և անթքարկելի չարիքներից։

1862–1904 թվականների դարաշրջանը հենց այդ վիսի բեկման դարաշրջան եր Ռուսաստանում, յերբ հին ան-

դաւնալիորեն, բոլորի աչքերի առջև կործանվում եր, խակ նորը դեռ նոր եր միայն կազմավորվում, ընդգործում՝ այդ կազմավորումը կատարող հասարակական ստեղծարարությունը առաջին անգամ ցույց տվին գործով, համազգային լայնածավալ մասշտաբով, մասսայաձև, բացահայտ գործողության մեջ ամենաբազմազան ասպարեզներում միայն 1905 թվականին։ Իսկ 1905 թվականի անցքերին Ռուսաստանում հաջորդեցին նմանորինակ անցքեր հենց նույն այն «Արևելքի»²⁶⁾ ամբողջ մի շարք պետություններում, վորոնց «անշարժությունը» հիշատակում եր Տալստոյը 1862 թվականին։ 1905 թվականը — «արևելյան» անշարժության վախճանի սկիզբն եր։ Յեզ հենց այդ ե պատճառը, վոր այդ թվականը պատմական վախճան բերեց տալստոյականությանը վախճան այն ամբողջ դարաշրջանին, վոր կարող եր և պետք ե ծնունդ տար Տալստոյի ուսումնաբին — վոչ վորպես անհատական վորեւ մի յերնույթ, կամ վոչ վորպես քմահաճույք կամ որիգինալություն անելու մի փորձ, այլ վորպես իդեոլոգիա կրանքի այնպիսի պայմանների, վորոնց մեջ եցին զանգում իրապես վորոշ ժամանակաշրջանի ընթացքում միլիոնավոր և միլիոնավոր մարդիկ։

Տալստոյի ուսումնաբին անպայման ուսուպիտական ե և իր բնույթակությամբ ռեակցիոն ե բառիս ամենաստույգ և ամենաախոր նշանակությամբ։ Սակայն, այստեղից ընալ չի բղխում վոչ այն, թե այդ ուսումնաբը սոցիալիստական չի յեղել և վոչ ել այն, թե նրա մեջ չեն յեղել քննադատական այնպիսի տարրեր, վորոնք ընդունակ են արժեքությունը մատակարարելու՝ առաջավոր գասակարգերի լուսավորման համար։

Կա սոցիալիզմ և սոցիալիզմ։ Արտադրության կապիտալիստական յեղանակ ունեցող բոլոր յերկրներում ել գործություն ունի մի սոցիալիզմ, վորն արտահայտում ե բուժուազիայի փոխանակելու յեկող դասակարգի իդեոլոգիան, և կա նաև սոցիալիզմ, վոր համապատասխանում ե

այն դասակարգերի իդեոլոգիային, վորոնց փոխարինելու յե գալիս բուրժուազիան։ Ֆեոդալական սոցիալիզմը, ուրինակ, հենց վերջին տեսակի սոցիալիզմն է, և այդ որին ակ սոցիալիզմի բնույթը վաղուց ե վոր, ավելի քան 60 տարի առաջ ե, ինչ գնահատված ե Մարքսի կողմից՝ սոցիալիզմի այլ տեսակներին զուգընթաց։

Այնուհետև: Թննադատական տարրերը հատուկ են Աւ Տալտոյի ուտոպիական ուսմունքին ճիշտ այնպիս, ինչպես վոր հատուկ են ուտոպիական շատ ուրիշ սիստեմներին։ Սակայն չպետք ե մոռանալ Մարքսի այն խորիմաստ նկատողությունը, թե՝ քննադատական տարրերի նշանակությունը ուտոպիական սոցիալիզմի²⁷⁾ մեջ «հակառակ հարաբերական» ե պատմական զարգացմանը։ Վորքան ավելի յե զարգանում, վորքան ավելի վորոշակի բընթյութ ե ստանում հասարակական այն ուժերի գործունեյությունը, վորոնք «կազմավորում» են նոր Ռուսաստանը և փրկություն են բերում ժամանակակից սոցիալիստական աղետներից, այնքան ավելի արագ քննադատական—ուտոպիական սոցիալիզմը զրկում ե «վորեե գործնական իմաստից և թեորիական վորեե արդարացումից»։

Քառորդ դար սրանից առաջ Տալստոյի ուսմունքի քննադատական տարրերը գործնականում կարող ելին յերեմի ոգտակար լինել բնակչության վորոշ խավերին՝ հակառակ տալստոյականության ուեակցիոն և ուտոպիական գծերի։ Վերջին, ասենք տասնամյակի ընթացքում, այդ արդպես լինել չեր կարող, վորովհետեւ պատմական զարգացումը 80 ական թվականներից սկսած մինչև դարավերջը բավականաշափ առաջ ե քայլել։ Իսկ մեր որերում, այն ամենից հետո, ինչ վերոհիշյալ մի շարք գեպքերը վերջ են տվել «արևելյան» անշաքժության, մեր որերում, յերբ այնպիսի հսկայական տարածում են ստացել «վեխականների» գիտակցորեն—ուեակցիոն՝ նեղ—դասակարգային, շահախնդիր—դասակարգային տեսակետից ուեակցիոն գա-

դագիաքները լիբերալ բուրժուազիայի շրջաններում, — յերբ այդ գաղափարները վարակել են նույնիսկ զրեթե մարքսիստներին, ծնունդ տալով «լեկվիդատորական» հոսանքին²⁸⁾, — մեր որերում, Տալստոյի ուսմունքի իդեալականացման ամեն մի փորձը, կամ՝ նրա «չարին չհակառակելու» մեղմացման և արդարացման յուրաքանչյուր ճիզը, նրա զիմումները «հոգուն», նրա կոչերը դեպի «բարոյական ինքնակատարելագործումը», նրա՝ «խղճի» և ընդհանուր «սերո» նրա դոկտրինաները, ասկետիզմի և կվիետիզմի²⁹⁾ նրա քարոզը և այլն, — ամենաանմիջական և ամենախորին վնասն ե հասցնում։

„Զvezda“ № 6, 1911 թ. հունվար 22-ին։

Ստորագրված ե Վ. Խլիխն, «Գրվածքների Ժողովածու»,
Տատոր XI մասն 2-րդ հջ, 171—175։

ՄԱՍՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Քեզ».—**Որաթերթ**, կաղետական կուսակցության որդան, հրատարակվում էր Պետքը բուրգում 1906 թ. մինչև 1917 թվականը՝ **Պ. Ե. Միլուկովի** խմբագրությամբ: 1917 թվին դառնում է կորնիլովականության և հականեղափոխության որդանը, լեցված լինելով կապիտալիստների կատաղի ատելությամբ դեպի հասունացող պրոլետարական հեղափոխությունը, սոցիալիստական հեղափոխական պրոլետարիատը և դեպի նրա բայլշեկական կուսակցությունը:

2. (Սօվուտավորականենք).—Պետական գումարի ֆրակցիաներից մեկն ելին հանդիսանում, վորպիսին կաղմվել էր 1906 թվին՝ նարոդնիկներին և եսերներին համակրող հեղափոխականորեն արամազրված Պետական Դումայի անդամներից: Այդ խմբակցության մեջ միասնականացնող գլխավոր մոժենուն էր հանդիսանում ազրարարին ու փորումի հավասարեցուցիչ հողոգտագործման վորով կատարելու ձգտումը: Տրուդովիկների ֆրակցիայի մեջ ելին մտնում գուղացիական անկուսակցական պատգամավորներից զատ նաև եսերները (Կերենսկին և ուրիշները): Տրուդովիկների ֆրակցիոն գոյություն ուներ բոլոր չորս գումաներում:

3. Ստոլիպին-կախողը.—Նիկոլայ Ա-ի մինիստրների խորհրդի նախագահ՝ 1905 թվի առաջին հեղափոխությունից հետո վրա յեկած ու եակցիայի շրջանում: Լինելով ներքին գործերի մինիստր Գորեմիկինի կարինետում՝ նա նշանակվեց մինիստր նախագահ՝ Ա գումարի ցրման ժամանակի: Ստոլիպինի քաղաքականությունն ամենից լավ է բնորոշվում հենց իր՝ իսկ ֆորմուլով՝ «Նախ խաղաղացումն, իսկ հետո ու փորմներ»: Այդ խաղաղացման նա ձգտում էր դաժանելի ճնշումների միջոցով՝ խեղդելով մամուլը, փաստորեն վերացնելով այն բոլոր ազատությունները, վոր «հոչակած եյին 1905 թվի հոկտեմբերի 17-ի մասնիքեստով», փակելով բանվորների արհեստական միությունները, ցըելով Ա Պետական Դուման և փոխելով ընտրական որհնքը (1905 թվի հունիսի 3-ին): աշխատավորության իրավունքները սահմա-

նակագիրու ուղղությամբ, ձնշելով ընտրությունները, ստեղծելով աղքային ընտրական կուրիաներ, անջատելով Խոլմչչինան լինական նահանգներից, արևմտյան միքանի նահանգներում իսկական ուսաւական զեմս ավոններ սահմանելով, կառավարական աջակցություն ցուց տալով «ուսւ ժողովրդի միության» և վերջապես յեռանգուն կերպով զարկ տալով ուղմաղաշային դատարանների գործունեյության, վորոնք կախուղան հանեցին միքանի հաղար մարդու: Նրա ու փորմներն այն ելին, վոր նա թուզ տվեց համացնական-գյուղացիներին սեփականություն դարձնել նրանց հատկացված հողաբաժինները, մի հանգամանք, վոր յեկավ նպաստելու գյուղական կուլակների հարստացման, այլև զատկած տնտեսությունների առանձնացման և խուսորացին (ապարակային) տնտեսությունները հովանավորելուն: «Դիպի ուժեղները բռնած այդ կուրսը» կիրառվում էր հող պահանջող միջակ գյուղացիության շուտափությունը՝ քայլքայման նպատակով և ֆերմերական ուժեղ տնտեսություններ ստեղծելու գյուղում՝ բուրժուազիամբ՝ գյուղում բուրժուական միապետության հենարան ունենալու համար: Ստոլիպինի քաղաքականությունն առավելապես յեռանդադին կերպով ոժանդակվում էր ոռուսական բուրժուազիայի աջ թիի կողմից, վոր կապված էր պետության գանձարանի հետ իր սատակարարություններով: 1911 թվին պրովակտատոր Բակրովը կիելի քաղաքային թատրոնում սպանեց Ասուլիպինին:

4. Նարոգնայա Վոլյա (ժողովրդական ազատություն).—Հեղափոխական նարոգնիկության կուսակցությունը: 1879 թվականին անջատվեց «Զեմլյա և Վոլյա» կուսակցությունից՝ իր գլխավոր և անմիջական խնդիրը համարելով տերրորի մեթոդներով ցարական իշխանության դեմ մաքանելը: 1881 թվի մարտի 1-ին «Նարոգնայա Վոլյայի» Գործադիր Կոմիտեյի վորոշմամբ՝ սպանվեց Ալեքսանդր Ա-ը: Նրա մահից հետո «Նարոգնայա Վոլյայի» Գործադիր Կոմիտեն մի նամակով դիմեց Ալեքսանդր Ա-ին, պահանջելով նրանից քաղաքական ազատություններ, ընդհանուր ներում և հիմնադիր ժողովի գումարում: Սակայն ցարական կառավարությունը, կանգնելով հասարակական ամեն շարժումը դաժանության ճնշումը ճանապարհի վրա, 80-ական թվականների յերկրորդ կեսին՝ պրովակատորներ Ոլլադսկու, Դեգակի և ուրիշների ովնությամբ՝ ջախջախեց «Նարոգնայա Վոլյա» կուսակցությունը, գուրս կորզելով նրա շարքերից առավելապես տոկուն և ակտիվ հեղափոխականներին: Չնայած «Նարոգնայա Վոլյայի»

թեռիական հայացքների արժատական սխալականության և
բանվոր գասակարգի համաշխարհային-պատմական դերը չըմ-
բռնելուն՝ վորպես հեղափոխական շարժման միակ հնարավոր
զեկավարի և սոցիալիստական հասարակություն կառուցողի,
«Նարոդնայա Վոլյան» խոշոր դեր կատարեց ցարական ինքնա-
կալության գեմ մզկող պայքարի պատմության մեջ, զարթե-
ցնելով բանվոր դասակարգը և ուղիներ հարթելով այդ գասա-
կարգի առաջավոր շերտերի համար:

5. 1861 թի Փետրվարի 19-ին. — վերացվեց ճորտատիրա-
կան իրավունքը և կիրառվեց ցարական հողավին ռեֆորմը:
Գնահատության լենթարկելով 1861 թվականի այդ ռեֆորմը,
Լենինը գրում եր.— «Արևմտյան Յեվրոպայի սետություններում
ճորտատիրական իրավունքի վերջին մնացորդները վերացվեցին
Թրանսիալում 1789 թվի հեղափոխությամբ, իսկ այլ յերկրների
մեծ մասում 1848 թվի հեղափոխությամբ: Ռուսաստանում 1861
թվին ժողովուրդը, վոր հարցուրավոր տարիներ կալվածատերերի
մոտ ստրուկ եր յեղել, անզոր եր լնդարձակ, բացահայտ և գի-
տակից պայքարի լենելու հանուն ազատության: Այդ ժամանա-
կաշշանի գյուղացիական ապատամբությունները սոսկ վորպես
մեկուսացած, իրարից անջատ և տարերային «բունտեր» մնացին
և այդպիսիները հաջողվում եր հեշտությամբ ճնշել: Ճորտատիրա-
կան իրավունքի վերացումը կատարվեց վոչ թե ապստամբված
ժողովրդի, այլ կառավարության կողմից, վորը Դրիմի պատե-
րազմում պարտություն կրելուց հետո, տեսավ, վոր այլ ևս բնավ
հնարավոր չե պահպանել ճորտատիրական կարգերը: Գյուղացի-
ներին Ռուսաստանում «ազատագրում» հիմն հենց իրանք՝ կալ-
վածատերերը, ինքնակալ թագավորի կալվածատիրական կառա-
վարությունը և նրա չինովիկները: Յեվ այդ «ազատարարները»
գործն այնպես առաջ տարան, վոր գյուղացիներն «ազատ արձակ-
վեցին» ծալքաներ չքավոր ության չափ սլովկած, կալվածատերերի
ստրկությունից զուրս լնկան, վոր նորից ստրուկ գնան ելի
նույն կալվածատերերին և նրանց արքանյակներին: Ազնվազարմ
պարունաք կալվածատերերն այնպիս ելին «ազատագրում» սուս
գյուղացիներին վոր գյուղացիական հողերի ավելի քան մեկ
հինգերորդական մասը կտրվեց հոգուտ կալվածատերերի: Իրանց
արլունքը տիրապետինը վորով վաղոված գյուղացիական հողերի համար գյու-
ղացիները պարտավոր ելին փրկանք վճարել, այսինքն՝ տուրք
տալ յերեկու ստրկատերերին: Այդ տուրքից հարյուրավոր միլի-

ոններ վճարեցին գյուղացիները ճորտատերերին, ավելի և ավելի
քայլացիկելով: Կալվածատերերը վոչ միայն գյուղացիական հո-
ղերից կողոպտեցին իրանց համար, վոչ միայն վատթարագույն
և յերեմն նույնիսկ միանգամայն անպետք հողերը հատկացրին
գյուղացիներին, այլ և այնպես կատարեցին հողի գնահատումը,
վոր գյուղացիներին մերթ արտավայր չեր մնում, մերթ մարդա-
գետին, մերթ անտառ և մերթ՝ անսուններ ջրելու տեղ: Բուն
Ռուսաստանի նահանգների մեծագույն մասում գյուղացիները,
ճորտատիրական իրավունքը վերացնելուց հետո ել, մնացին
նույն անելանելի ստրկության մեջ կալվածատերերի մոտ: Ազատ-
վելուց հետո ել գյուղացիները մնացին ելի նույն «սատորին»
դասը, հարկացին կթու կովո, նույն սկ վսուրը, վորոնց հալա-
ծում ու խոշտանգում եր կալվածատերերի կողմից նրանց վրա
կարգած իշխանությունը, հարկեր ու տուրքեր եր քամում նրան-
ցից, ծեծում ու ջարդում եր նրանց մտրակներով և անում ամեն
տեսակ վայրագություններ: Աշխարհիս և վոչ մի յերկրում՝ «ա-
զատագրվելոց» հետո՝ գյուղացիությունն այդպիսի քայլացում,
այդպիսի ծացը չքավորություն, այդպիսի ստորագում և անար-
գանքներ՝ չեր ապրել, ինչպես Ռուսաստանում: Սակայն՝ ճորտա-
տիրական իրավունքի վերացումը ցնցեց ամբողջ ժողովուրդը,
զարթեցրեց նրան իր դարավոր քնից, սովորեցրեց նրան, վոլ-
ինքն իր համար յելք վորոնի և պայքար մղի իսկական և լիա-
կատար ազատություն՝ ձեռք բերելու համար: Ճորտատիրական
իրավունքի վերացումից հետո Ռուսաստանում սկսեցին ավելի
և ավելի արագ թափուկ գարգանալ քաղաքները, Փարբիկաներն
ու գործարանները և սկսեցին կառուցվել յերկաթուղիներ: Ճոր-
տատիրական Ռուսաստանին փոխարինելու յեր գալիս կապիտա-
լիստական Ռուսաստանը: Նստակենցալ իր գյուղից կառչած և
տերտերներին հավատացող ու «իշխանությունից» վախեցող
ճորտ գյուղացու փոխարեն՝ աճում եր գյուղացիների մի նոր
սերունդ, վորքաղաքներ եր գնում սեղոնալին աշխատանքի և
թափառական կյանքի ու վարձու աշխատանքի դառն փորձից
վորոշ բան ել եր սովորել: Մեծ քաղաքների գործարաններում և
Փարբիկաներում բանվորների թիվը քանի գնում՝ աճում եր:
Յեվ ապա աստիճանարար սկսեցին գյունալ բանվորտկան միավո-
րություններ՝ կապիտալիստների և կառավարության գեմ միասնո-
րեն մաքառելու համար: Մղերով այդ պայքարը, սուսական բան-
գոր գասակարգը ոգնում եր միլիոնակոր գյուղացիներին վարքի

յենելու, ուզգվելու և մի կողմ նետելու ձորաւստըւկների իր բոլոր սովորությունները»: (Վ. Ի. Լենին «Թրվածք. ժողովածու», հատոր Խ1, մասն 2-րդ, էջ՝ 219—221):

6. Սկզբնական կուտակման գարաւեջան. — ասելով, նկատի
ունենք կաղիտավիզմի գարգացման պատմության սկզբնական
շրջաններից մեկը, յերբ առևտրական կապիտալը միջոցներ եր
կուտակում, վարոնք տնհրաժեշտ ելին կապիտալի խոտական ար-
տադրության կազմակերպման համար։ Դրամական միջոցների
կուտակումը բանվորական «աղատ» ուժի կուտակման զուգըն
թաց եր կատարվում, վորպիսին անհրաժեշտ եր արտադրության
կապիտալիստական լեղանակին։ Այդ կուտակումը կատարվում
եր մանր արտադրողների (գլուղացիների, մանր արհեստավոր-
ների և տնախագործների) սեփականազրկության և դաժանա-
գույն հարստանարության, ինչպես նաև նոր հայտարերված
յերկրների կողոպուտի միջոցով։

7. ԻՆԿՎԻԳԻԳԻԱՅԻ—այդ միջնադարուան շրջանի կաթոլիկ յեկեղեցու դատարանն էր, վոր հիմնված էր «հերետիկունիքին» և ընդհանրապես պատի հոգեոր իշխանության համար վտանգավոր և անպետք մարդկանց վոչնչացնելու նպատակով։ Ինկվիգիցիան աչքի էր ընկնում իր անողոք գաֆանությամբ և արյունաբռու հնարագիտությամբ՝ խոշտանգութիւնի է մահապատճեների ասպարիգում։ Ինկվիգիտորները ինկվիզիցիայի ներկայացուցիչներն ու կազմակերպողներն եին,

Տ. Վեխականները. — մի հոսանք ու խումբ ելին կազմում
1908—10 թվականներից ցարական ռեակցիայի տարիներին։
Դրանք-բուրժուական մի խումբ ինտելիգենցիաներ ելին, վորոնք
հրաժարվել ելին հեղափոխությունից, ընկել վհատության, պե-
սիմիզմի և հեղափոխությանը չհավատալու դիրկը, զղջում ելին
իրանց անցյալ «հեղափոխականության» համար և միավորու-
թյուն ելին փնտրում ռեակցիոն տերութականության և կրոնի
սեց, վեխական անունը նրանք ստացել ելին «վեխս» (նշանաձող)՝
անունով ժողովածուից, վոր կազմված եր նախկին «մարքսիստ-
ներ» Բուլղակովի, Բերդակենի և Մտրուվեյի և ուրիշների հոդված-
ներից։

կայացուցիչը և Նիկոլայ Ռոմանովի ռեակցիոն քաղաքականության ականավոր ներշնչողներից մեկը։ Յեկեղեցական սեհար-լուրակացին մի գործ վար բանակուվ և միաժամանակ պայքար եր մզում է։ Ն. Տալմատիլ դիմ։ Հեղափոխությունից հետո զինա-վորում եր միապետական շարժումը հոգեւորականության մեջ, ակտիվ կերպով աջակցելով Դենիկինին, իսկ վերջնիս ջախջա-խումբից հետո փախավ արտասահման, վորտեղ և միապետական-ների համագումարի կազմակերպողներից մեկը հանդիսացավ։

10. «Ենվայե Գրեմյա».—Սուլվորինի թերթը, վոր հրատարակվում էր Պետերբուրգում 1876 թվից մինչև 1917 թիվը։ Անձարդուրակային աղնվականության և ցարական բյուրոկրատիայի որգան։ Պազրումային որգան, վոր ստորաքարշանում եր ցարական կառավարության և ճորտատերերի առջև, վորի համար ել ստացել եր՝ «ինչ կբարեհածեք» կոչումը։

Ա. Ա. Պուրեանվ. — (*Ստարովեր*), ծնվել է 1869 թվին Մոսկվայում, ավարտել է Պետերբուրգի համալսարանը: «Բանվոր դասակարգի ազատազրության պարագի Պետերբուրգի միության» մասնակցողներից մեկն եր: 1898 թվին աքսորվեց Վլատկայի Նախանձը: Աքսորի ժամկետը լրացնելուց հետո անցավ արտասահման, վորտեղ մտավ «Խակբատի» խմբագրության կազմի մեջ: 1903 թվին մասնակցեց ՌՍԴԲԿ և համագումարին, վորտեղ ընդունվեց նրա բանաձեռ գեղի լիբերալներն ունենալիք վերաբերմունքի մասին: Պառակտումից հետո փոքրամասնության պարագլուխներից մեկը՝ Առաջին հեղափոխության շրջանում վերադարձավ Ռուսաստան: Ռեակցիայի տարիներին ղեկավարում եր մենշևիկ-լիկվիդատորների ամենաաջ թերը: Պատերազմի պահին մենշևիկների մեջ սոցիալ-պատրիոտիզմի ամենահետևողական ներկայացուցիչը: 1917 թվին ղեկավար դեր եր կատարում բուրժուատան «Դեն» լրագրում, վորը կատաղի կամովանիա յեր մղում բայց լիկների դեմ: Ներկայում-եմիզրանտ, վոր կանգնած ե ավելի աջ, քան պաշտոնական մենշևիկները: Եռերես հրատարակել ե ԽՍՀՄ դեմ չարամիտս հարձակումներով լեցուն և նրա գործերին միջամտելու պահանջն առաջարող մի գիրք:

12. «Եաւս Զարյա»—Յերկշարթաթերթ, որդան մենակիկ-լիկվեդատորների: Հրատարակվում եր Պետերբուրգում 1910—1914 թվականներին, Պոտընասովի մերձավոր մասնակցությամբ:
Լինիխի ճիշտառակած՝ Վ. Բաղարովի և Մ. Նեֆելովսկու հոգածները գետեղված են «Ն. Զ.»-ի 1910 թվականի № 10 ուժու-

13. Վ. Բազարով (Վ. Խուռդնե) — 1905 թվի հեղափոխության առաջնակիցներին հարում եր բոլշևիկներին։ Թիհակցիայի շրջանու հեռացագ բոլշևիկներից՝ տակտիկական կազմակերպչական և գիտական հարումներին հայացքներով մերձենալով լիկվիդատորներին Տալմտոյի մասին գրած նրա այն հոդվածը, վորի մասին խոսուա և լենինը, տպագրված եր «Նաշա Զարյա» յերկարթաթերթի 1910 թվի № 10-ում «Լ. Ն. Տալմտոյը և սուս ինտելիգենցիան» խորագրով։ Վ. Բազարովի ոպորտունիսական հայացքների գեմ մղվող պայքարին են նվիրված Վ. Ի. Լենինի այդ շրջանի միշտք հոդվածները։ Այդ հոդվածներից մեկում («Եր լուծարքողները» — Պոտրեսովի և Վ. Բազարովի մասին — տես՝ «Գրված. ժողով. հատ. Խ, մասն 2-րդ, էջ 211), — Վ. Ի. Լենինը գրում եր. «Բազարովը դատում է կադետորնեն, «վեխորեն», ավիլի ճիշտ և Բազարովը անցել է վաղուց արգեն այդպիս դատող Պոտրեսովիների և ընկ. բանակը... Բազարովը, վոր կամենում եր մարքսիստ մինել, գառնում եալժմ նախկին մարդ, վորն ընդունակ է թեանցուկ գնալ պարոնայք Պոտրեսովների հետ»։ 1917 թվի փետրվարյան հեղափոխությունից հետո Բազարովը դառնում է կիսամենչեկական «Եռվայա Ժիդն» թերթի խմբագիրներից մեկը, մի թերթի, վոր համառ պայքար եր մզում բոլշևիկների և զինված ապստամբության նախապատրաստման լենինյան տակտիկայի դեմ։ Ներկայում Բազարովը Կոմունիստական Ակադեմիայի անդամ է և ականավոր տնտեսագետ զրոդ, աշխատում է պետովանում։

15. Կյուղիկ Թեյերըախ (1804—1872).—Գեղսմանական հոչակավոր փիլիսոփա, Հեգելի աշակերտը և «Բրիտանոնելլության Ելությունը» հայտնի աշխատության հեղինակը: «Ֆելքրբախի գարգացման ընթացքը», զրում եր նրա մասին ֆ. Ենգելսը, —վոչ այլ ինչ ե, բայց յեթե հեգելականի, ճիշտ ե, ըստ ամենալիի

ուղղահավատ հեգելական նա յերբեք չի լեզել, —վերածվելը մաս-
տերիալիստի: Այդ գարգացման վորոշ աստիճանում նա հանգեց-
իր հախորդի իդեալիստական սխտիմից իր կապերը լիովին-
խզելուն»: Սակայն, Ֆեյերբախը դեռևս անզոր եր վերջնականա-
պես վերանալու իդեալիզմից: «Ֆեյերբախի իրական իդեալիզմը
հանդես է գալիս,—գրում է ֆ. Ենգելը, —հենց վոր մենք մոտե-
նում ենք նրա՝ ետիկային և կրոնի փիլիսոփայությանը: Ֆեյեր-
բախը բնավ չի կամենում վոչչացնել կրոնը, նա ուզում է լրա-
ցնել ալգայիսին, ինքը՝ փիլիսոփայությունը պետք է կըսնի
կրոնի կողմից»: Ֆեյերբախ մատերիալիստը—ներքենից, իդեա-
լիստը— վերկից», —այսպես է բնորոշել նրան Ենգելը: «Ֆեյեր-
բախը չի տեսնում, վոր «կրոնական դպացումը» հենց ինքն ել
հասարակական արգումեն, —գրում եր Կ. Մարքսը: «Նա իսկա-
կան մարդկային գործունեյությունը դիտում է սոսկ գորպես
թեորետիկական գործունեյություն: Նա չի հասկանում «հեղափո-
խական», գործնականորեն-քննադատական գործունեյության
նշանակությունը»:

16. Խզութեա Ա. Ս. — Կաղետական կուսակցության հայտնի գործիչներից մեկը, նրա աջ թիկի ներկայացուցիչը: «Ռեշ» թերթի մերձավոր աշխատակիցը և Ստոլիպինի իմպերիալիստական քաղաքականության ջատագովը: «Իզուկը», — զրում և նրա մասին վ. ի. Լենինը, — ուսւական այն ինտելիգենցիաների մի նմուշն երփորոնք 25—30 տարեկան հասակում «մարքսիստություն» են անում, 35—40 տարեկան՝ հասակում լիբերալանում են, իսկ անոնհետեւ — սկ հարյուրակային դառնում»:

17. ԿԵՎԵՊՈՄԱԿԻ Մ.—կեղծանունն է 1876 թվին ծնված և
մենշևիկների աջ թևին հարող հրապարակախոս Մ. Միկլաշևիու-
թ. Ներկեզում Տալստոյի մասին գրված այն հոգվածը, վոր
հիշատակութ և լենինը, վորպես առաջնորդող տպագրված եր-
«Նաշա Զարյա» ժուրնալի 1910 թվականի № 10-ում՝ «Լի Տալստոյի
մահը» խորագրով:

13. Անատոլ Թրանս — (ծն. 1844 - 1925) հայտնի ֆրանսիկացի գրող և բանաստեղծ:

19. Ա. Մարտով (1873—1923).—Կեղծանունն է Թուսատանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության հնագույն անդամներից մեկի Յուլ. Ոս. Ցեղերբասումի: 1900 թվականի վերջում Մարտովը՝ Վ. Ի. Ռելիանովի Լենինի, Գ. Վ. Պլեխանովի, Վ. Ի.

Հասուլիչի և Ակսելըողի հետ՝ միասին մտավ «Խոկրայի» խմբագրության կազմի մեջ: 1903 թվին, ՌՍԴԲԿ լինամագումարում Մարտովը բաժանվեց համագումարի մեծամասնությունից «Խոկրայի» խմբագրության կազմի և կուսակցության անդամ լինելու վերաբերյալ խնդիրներում: Կուսակցության անդամ լինելու վերաբերյալ այն կետը, զոր խմբագրված եր Մարտովի կողմից, դռւու եր լրաց անում անկայուն և ոպորտունիստական տարրերի համար գեղի կուսակցությունը: Համագումարում ծագած տարածաշնությունների հողի վրա ուսւական սոցիալ-գենուրատական կուսակցության շարքերում յերկու հիմնական հոսանք առաջացավ, «բոլշևիկներին և «մենշևիկների», զորի առաջնորդն ու ամենից ականավոր հրապարակախոսը հանդիսացավ Մարտովը: Պատերազմի պահին Մարտովը մենշևիկ-ինտերնացիոնիստների շարքերում եր նա մասնակցում եր Ցիմերվալդի հոնֆերանում (կենարոնը) և խմբագրում եր Պարիզում գույս տեսնող «Եռվոյք Սլովո» թերթը: Փատրվարյան հեղափոխությունից հետո Մարտովը ամբողջ մի խումբ մենշևիկ-ինտերնացիոնիստների հետ Գերմանիայի վրայով յեկավ Ռուսաստան: Հեղափոխության առաջին շրջանում Մարտովը կանգնած եր ինտերնացիոնիստական դիբերում և հաճախ ու մի շարք խնդիրներում շեղվում եր իր կուսակցության մեծամասնությունից, զորպիսին աջակողման սոցիալ-պաշտպանողական գերք եր գրագում: Խորհուրդների լինամագումարում պաշտպանում եր այն տեսակետը, թե կառավարությունն անհրաժեշտ է կազմել բոլոր սոցիալիստական կուսակցությունների ներկայացուցիչներից: Մենշևիկների և աջ եսերների հետանալուց հետո մասց համագումարում: Շուտով սակայն, Մարտովին լիովին քշեց ու տարավ մենշևիկական հոսանքը, զորպիսին հոկտեմբերյան հեղափոխությունից հետո քեց նրան խորհրդացին իշխանության թշնամիների բանակը: 1921 թվի սկզբին, Մարտովը զորպիս տարագիր գնաց հերթին, զորտեղ և սկսեց դեկավարել «Սոցիալիստական վեստնիկը»: Մեռավ 1923 թվին:

20. Լեզեկի (Վ. Ռ. Յեղերբառում).—Մենշևիկ-լեզեկիուր, Մարտովի յեղբայրը:

21 Զերեվանիք (Ձ. Ա. Լիպկին).—Մենշևիկ լեզեկիուրը առաջնորդներից մեջը, ՌՍԴԲԿ 1V և V համագումարների մասնակիցը, Պատերազմի ժամանակ պաշտպանողական, Փետրվարյան հետափոխությունից հետո բուրգուական կազմի լինելու վերաբերյալ:

22 Պ. Պ. Մատով (ծնվել և 1867 թվին).—Մենշևիկական ականավոր զբականագետ-տնտեսաբան և ագրարային խնդրի մասնագիտ: 1896 թվին աշխատակցում եր «Սամարսկի Վեստնիկին» մարքսիստական առաջին լեգալ թերթին: 1908 թ. Մարտովը դատական պալատի կայսերած դատավճռով դատապարագիւցիուր տարով բերդարձելության, զորպիս սոցիալ-գենուրատական թերթի խմբագիրը: Մասնակցել և ՌՍԴԲԿ Ստոկհոլմի համագումարին 1906 թվին, զորտեղ (Պետականովի մացված ուղղումով) ընդունվեց նրա ոպորտունիստական ագրարային ծրագիրը (հողի մունիցիպալիզացիա): Լենինի կողմից առաջարկված գիրը («ազգանացման» դեմ: 1907 թվին Մասլովը աշխատում եր Ապգանացման դպրությունից մեջ առաջարկված գորական դումայի սոցիալ-գենուրատական ֆրակցիայում զորպիսական անձնավորություն: Ռեակցիայի արթիներներին կանգապիս տեղյակ անձնավորություն: Պետերացի ժամանակակիցներում գորական գամանակ իմպերիալիստական գիրք զբավեց՝ իր իրականացման վերաբերյալ աշխատառարանություններով պաշտպանելով այն մարքսիստական պատճառարանություններին առ գերազանց մի ակտիվ դեր չեր խաղում: 1917 թ. հեղափոխությունից հետո քաղաքական վոչ մի շեղինակ դեր չեր խաղում: 1923 թվից սկսած քաղաքական վոչ մի շեղինակ դեր հաջուկ առաջարկված է Մոսկվայում: Հեղինակն ե մի շարք տնտեսագիտական կառաջնական խօշոր աշխատությունների (մասնավորապես՝ ագրարային խնդրի), զորոնց մեջ ոգտակար տեղեկությունների և մտքերի հետ միասին, քիչ չեն նաև հակամարքուստական և տեսականութեն ոպորտունիստական առաջարպություններ:

23. Կարլ Կառլուշի. — Գերմանական սոցիալ-գենուրատիայի և Յերկըրդի ինտերնացիոնալի թերթետիկը, տնտեսագետ և պատմաբան: Սկսելով գիտական իր աշխատությունները Ֆ. Ենգելսի անընդական դեկավարության ներքո, յուրացրեց նրանց (Կ. Մարքսի և Ֆ. Ենգելսի) զբական ժառանգությունը և անավարտ աշխատությունը և շարունակեց նրանց թեորետիկ աշխատանքը: 1887 թվից սկսած խմբագիր մարքսիստական գիտական «Նոր ժամանակ» ժուռնալի: Բերնշտեյնի կողմից ձեռնարկած Մարքսի ու իվլիպիալից հետո հանդես յեկավ ու վիզիտոնիզմի քննադատությունների մարքսիզմի արքայի հարում թիւմբ: Մինչև 1914—1918 թվականների պատերազմը հարում մարքսիզմի ձախ արժմատական թերթն: Պատերազմի մոմենտից եր մարքսիզմի ձախ արժմատական թերթն: Պատերազմի մոմենտից զրավեց ծայրաստիճան անորոշ և կիստա մի դիրք, ջանալով թեորիապես իրար կապել ինտերնացիոնալիզմը և հայրենիքի պաշտպանությունը: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո պաշտպանությունը:

Հանդես յեկավ խորհրդացին «պիտական» քննադատությամբ ի պաշտպանություն դեմոկրատիայի և պարլամենտարիզմի գլորվելով մինչև ռեֆորմիզմը։ Իր վերջին աշխատություններում լիովին հետ նահանջեց հեղափոխական մարքսիզմից և հրաժարվեց այն բոլոր առաջադրություններից, վոր մի ժամանակ նա հակադրում եր լնդգես Բերնշտենին։ Ա ինտերնացիոնալի առողջապահության մեջը՝ Ռուսական մենշևիկների համախոհը։ Կոմինտերնի և ԽՍՀ Միության բացահայտ թշնամին։

24. Պէիսանով Գ. Վ. (1856—1918) — Նշանավոր ռուս հրապարակախոս և գիտնական, Ռուսաստանի Սոցիալ-դեմոկրատական Բանվորական կուսակցության հիմնադիրներից մեջը վորը հսկայական ազդեցություն և ունեցել մարքսիզմի զարգացման վրա Ռուսաստանում: Գ. Վ. Պէիսանովը հարել է հեղափոխական շարժման անցյալ դարի 70-ական թվականներին, մերձենալով բունտար-նարոդնիկներին: Կազանի տաճարի առջե 1876 թ. գեկտ. 6-ին տեսվի ունեցած ցույցի ժամանակ՝ Պէիսանովը ասեց իր նշանավոր ճարյա ուսւական ինքնակալության զեմ՝ Վարոնների համագումարում Պէիսանովը հանդիս է եկավ վորպես ապագա նարոդովոլեցների վճռական հակառակությը, առանձնանալով կուսակցությունից, ծրագրեց «Զերնի Պերեգել» թերթի կազմակերպությունը, վորի շուրջը մտադրություն ուներ համախմբելու մարտական մի լայն կուսակցության բոլոր համախմբներին, կուսակցության, վորը հեղափոխական աշխատանք պիտի կատարեր զիմավորապես քաղաքներում բանվորների և մտավորականության մեջ: Հարկադրված լինելով տարագրվելու արտասահման, Պէիսանովը 1883 թվին, Գ. Բ. Ակսելլովի, Վ. Ի. Զասուլիչի, և Գ. Ի. Դիչի և Վ. Ի. Իգնատովի հետ միասին կազմակերպեց ուսւական առաջին սոցիալ-դեմոկրատական՝ «Աշխատանքի Ազատագրություն» խմբակը, վորպիսին հսկայական սգեցություն ունեցավ սոցիալ-դեմոկրատական աշխարհաճաշեռության զարգացման վրա Ռուսաստանում: Այդ խումբը շառուածություն էրատարակեց մի շարք մարքսիստական բրոյալիստ ուսերեն լեզվով, այդ թվում նաև Գ. Պէիսանովի՝ «Սոցիալիզմը քաղաքական պատքարը» բրոյալիստը: 1884 թվին Գ. Վ. Պէիսանովը լուսու ընծայեց իր մարքսիստական լերկրորդ խոշոր աշխատավորությունը՝ «Մեր տարածանությունները» խորագրով, վորի մեջ ուր քննադատության լենթարկեց ուսւական նարոդնիկությունը: Վեր մոմենտից ել սկսվում ե Պէիսանովի փայլուն բանակառվե

շրջանը նարողներիների դեմ և մտրքսիզմի հրմական թեորետիկան պրոբլեմների մշակումը: Դրական և գիտական աշխատություններին զուգընթաց՝ Պլեխանովը գործոն մասնակցությունը ուներ նաև կուսակցության կյանքում և պայքարում: Վլ. Իլ. Լենինի հետ միասին՝ նա վճռական պայքար եր մղում եկոնոմիստների դեմ: 1901 թ. մինչև 1904 թ. Պլեխանովը, «Իսկրայի» և «Զարյայի» խմբագիրներից մեկն եր: 1903 թվին, կուսակցության և համագումարից հետո, հարեց մենշևիկներին: Լիկվիդատորության շրջանում պաշտպանում եր կուսակցական ընդհատակա լրա կազմակերպությունները պահպանելու անհրաժեշտությունը: Իմպերիալիստական պատերազմի սկզբում գրավեց ծայրահեղ պաշտպանողական դիրք, վորով և առիթ տվեց Վլ. Իլ. Լենինին գրելու նրա դեմ «Սոցիալ-Դեմոկրատում» սուր և զայրույթով լիցուն հոդվածները: 1917 թվի փետրվարյան հեղափոխության ժամանակ վերաբանալով Ռուսաստան, շարունակում եր կանգնած մաս պաշտպանողականության դիրքերում և պաշտպանում եր պտտերազմը հաջողությամբ վերջացնելու շահերի տեսակետից՝ բուրժուազիայի հետ համաձայնության դալու անհրաժեշտությունը: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո սակայն՝ մնալով խորհրդացին իշխանության քաղաքական հակառակորդը, Պլեխանովը հրաժարվեց նրա դեմ կովելուց: Գ. Վ. Պլեխանովը մեռակ 1918 թվին քաղաքացիական պատերազմի տաք շրջանում:

26. Արեվելքում 1905 թվականի նժամ գետքեր.—ասելով
Հենինը նկատի ունի հեղափոխական շարժումները Թյուրքիայում,
Պարսկաստանում և Զինաստանում (1908—1910 թվականներին):
Վորոնչ իրանց զարգացմամբ պարտական էին 1905 թվի ոռւ-
սական հեղափոխության անմիջականորեն հեղափոխականացնող
ազգեցություն:

Հեղափոխական ընդգրութեաբի հենց սոսկական փաստը
այնպիսի լերկըներում, վորոնք «զարավոր անդորրի» լերկըներ
եին թվում; գալիս եր խորտակելու ռեակցիոն այս առասպելները
և սեհարյուրակային-տերտերական այն ստահողու-
թյունները, թե Արևելքն լերբեք հեղափոխութեան չի տեսել ե

շի եւ կարող տհսնել: Մեակցիոն այս տրամադրություններից չխուսափեց նաև է. Ե. Տալստոլը, — «Ճին Ռուսաստանի իդեոլոգը» ինչպես անվանում եր նրան Վ. Ի. Լենինը, — այս Տալստոլը, վոր ջանում եր տապալել մարքսիզմ՝ ի միջի այլոց, նաև հենվելով Արքեքքի «անշարժության» վրա: Այդ առթիվ Վ. Ի. Լենինը զրում եր «1905 թվականի սուսական շարժումից հետո, գենոկրատական հեղափոխությունն ընդդրկեց տմբողջ Ասիան թլուրքիան, Պարսկաստանը, Չինաստանը... 1905 թվից հետո վրա հասավ 1908 թվականը Թլուրքիայում, 1909 թվականը՝ Պարսկաստանում և 1910 թվականը՝ Չինաստանում... Յեվ այժմ Արևելքում (Ճապոնիայում, Հնդկաստանում, Չինաստանում) կյանքի և պայքարի համար արթնացող նոր դասակարգերի յուրաքանչյուր նոր որը (այսինքն՝ այն հինգ հարցուր սիլիոն մարդկությանը, վորոնք չերկարգնդիս բնակչության մեծամասնությունն են կազմում և վորոնք իրենց պատմական անգործունեյությամբ և պատմական մինչև ալոր ճացումն ու փոռումն ելին պայքանավորում Յեվրոպայի, առաջավոր բազմաթիվ պետություններում) ահա այդ նոր դասակարգերի և նոր ժողովուրդների կյանքի և պայքարի համար արթնացող յուրաքանչյուր նոր որն ավելի և ավելի յե հաստատում մտրքսիզմի ձևությունը» (Գրվածքն. Ժողվածու, Հատոր ՀՀ, մասն 2-րդ, էջ 497):

27. Աւտոպիական սոցիալիզմ. — Այսպես են կոչվում՝ տարբերելու համար Մարքս-Ենգելս-Լենինի գիտական սոցիալիզմից՝ Թոմաս Մոորի, Ռոբերտ Ուունի, Ֆուրիի և այլ մատածողների հայացքները, վորոնք ձգտում ելին իրականացնել հասարակության սոցիալիստական վերակազմությունը վոշ թե պրոլետարիատի դասակարգային պայքարի և սոցիալիստական հեղափոխության միջոցով, այլ՝ համոզմունքի, որինակ տալու, բարուական ներգործության և սրբնակելի, ցուցադրական կոմունաներ ստեղծելու ուժով, վորոնց ստեղծումը կարող է ունեօր մարդկանց միջոցով պետք և գար համոզելու մարդկությունը, վոր սոցիալիզմին դիմելն անհրաժեշտ է: «Աւտոպիա բառը հունական բառ է: «Ու» հունական նշանակում է «վոչ», «տոպոս» տեղ: Աւտոպիա այս այն տեղն է, վոր գրություն չունի, չկա, ցնորք է. Տորին-վածք, հեթիաթ: Աւտոպիան քաղաքականության մեջ այնպիսի մի ցանկություն է, վորպիսին վոչ մի կերպ չի կարելի իրականացնել՝ վոչ այժմ, վաշ հետագալում, — մի ցանկություն, վորը չի հենվում հասարակական ուժերի վրա, չի ամբաղնդվում քաղա-

քական, գասակարգալին ուժերի աճմամբ և զարգացմամբ»: (Վ. Ի. Լենին):

28. Լիկվիդատորական հոսանքը. — Այդ մենշերյան է, վոր ցարական ունակցիալի տարիներին վերասերվել եր, վերածվելով մի հոսանքի, վոր բացահայտողին հրաժարվում եր կուսակցությունից: Մենշերկ-լիկվիդատորները (ուրարգողները) ճգնում ելին վերջ տալ, գոչնչացնել հին հեղափոխական ՌՍԴԲԿ, վոր պարքարում եր ցարական ինքնակալության և ճորտատիրական սեմիմի գեմ և կամենում իր փոխարինել ալգավիսին ընդարձակորեն լեզու (ցարական-կալվածատիրական կլիկին հաճելի և նրա կողմից թուլարված) մի կուսակցությամբ, վոր պետք և ղեկավարվեր լիբերալ բուրժուացիայի կողմից: Մենշերկ-լիկվիդատորների այս հականիղափոխական տրամադրությունների և կազմալուծող ու քայլաչիչ գործունելության գեմ կատաղի և անհաշելի պայքար ելին մզում Վ. Ի. Լենինը և Քոլեկտիվինստիները: Այդ պայքարի հետեւանքով լիկվիդատորները բանվորական շարժման մեջ գրաված իրանց «գիրքերից հեռացվեցին» և 1912 թվին Պարագայում կայացած կուսակցական էռնֆերանսի վորոշմամբ արտաքսվեցին կուսակցության շարքերից:

Հետագայում, 1917 թվի հեղափոխության տարիներին լիկվիդատորները և վեհականները կատաղի պայքար ելին մզում և այժմ ել մզում են Հոկտեմբերյան հեղափոխության, խորհրդային իշխանության և մեր կուսակցության գեմ՝ միանալով սպիտակ զգարդական վողջ հմիգրացիային: «Լիկվիդատորությունը բառի նիզ իմաստով, — զրում եր Վ. Ի. Լենինը, — մենշերկիների լիկվիդատորությունը կայանում է սոցիալիստական պրոլետարիատի հեղափոխական գասակարգային պայքարի գաղափարական ժխտման մեջ ընդհանրապես և պրոլետարիատի հեղեղոնիփան մեր բուրժուացիամբ կամուկրատական հեղափոխության մեջ ժխտելում մասնավորապես: Կազմակերպչորեն լիկվիդատորությունը սոցիալիզմութեատական սննդեկալ կուսակցության անհրաժեշտության ժխտումն և նշանակում և այդ կապակցությամբ՝ հրաժարում ԽՍԴԲ կուսակցությունից, հեռացումն նրա շարքերից, պայքար նրա գեմ լեզու մամուլի հջերում, բանվորական լեզու կազմակերպություններում, արհեստակցական միություններում, կոպերատիվներում, համագումարներում, վորակել մասնակցում և

բանվորական պատգամավորներ և ալլն»: (Վ. Ի. Լենին, — «Գըր-վածքն. Ժողովածու», հատոր XI, մասն 1, էջ 274):

29. Կվիետիզմ. — Տեսակետ, համոզմունք պասսիվության, անգործունելության, չարին չհակառակելու, կլանքից հեռանալու և ալլն, անհրաժեշտության մասին:

Դյու Եցեր համեմել 5 Գյումրիի կոմիտե
և Միահանդիմ 5 30.03.07թ



ՀՀ Ազգային գրադարան



NL0170581

